№ 2 (82) VIII ՏԱՐԻ 28 ՓԵՏՐԻԱՐ 1898

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԵՐԵՔ ՄԱՀ

Վանի վերջին դէպքերու հետևանօք քաղաքէն դուրս ելած երեք ընկերներ՝ **ՏԻԳՐԱՆ ՏԷՐՈՅԵԱՆ** (Վազգէն), խմբապետ շատախցի **ՄԻՔԷՕ** և վանեցի **ԱՐՇԱԿ** յունուար 2-ին (Ն. տ.) Կուռուբաշի դաշտին մէջ կռուի կը բռնուին զիրենք հետապնդող մօտ 200 զինուորներու և ոստիկաններու հետ։ Երեքն ալ կ'իյնան հոն քաջի մահով։ Թշնամին կորուստն անյայտ է։

Իրենց մարմինները հետևեալ օրը Արարք եկեղեցիի գաւթին մէջ կ'ամփոփուին։

Այդ ծանր կորստին առջև մէկ աղաղակ միայն կը բարձրանայ հայ յեղափոխական բանակին մէջ. „Սղմեցէ՛ք ձեր շարքերը, ընկերնե՛ր, և յառա՛ջ"։

ՍԱՂԱԹԷԼ ԽԱՆ Մ. ԶՕՀՐԱԲԵԱՆ

1877 — 1897

—o—

Այդ փառաւոր մահուան առջև, որ լուսաշող եկաւ պսակելու Սաղաթէլի մատաղ ճակատը — իբր տրամաբանական անողոք լուծումը նրա ձգտումների — հիացումի եւ յարգանքի խորին զգացումը միայն իր տեղն ունի։

Կարճ եղաւ իր կեանքը եւ համեստ։ Բայց որքա՜ն ստոփիչ ու խրատական է այդ կեանքը մեր հասարակութեան համար, ուր այնքա՜ն բազմաթիւ են Սաղաթէլի վիճակակիցները. . .

Համադանի մի բարեկեցիկ ընտանիքի զաւակն էր Սաղաթէլը։ Նրա հայրը, որ քաղաքի ազդեցիկ եւ պատկառելի դիրքի տէր մարդկանցից էր, տալիս է իր որդուն Համադանի մէջ հնարաւոր եղած լաւագոյն կրթութիւնը։ Բայց դա չի գոհացնում պատանի Սաղաթէլին. եւ նա 1893-ին անցնում՝ է Թէհրանի բողոքական միսիոնարների դպրոցը, ուր երեք տարուց աւարտում է իր ուսման շրջանը։ Ուսուցիչները, տեսնելով Սաղաթէլի բազմակողմ ընդունակութիւնները, մի քանի անգամ խնդրում են նրա ծնողներին թոյլ տալ իրենց որդուն արտասահման գնալ եւ իր ուսումը կատարելագործել, բայց նրանք մերժում են այդ առաջարկը, դժուարելով բաժանուել իրենց սիրելի զաւակից։



ՍԱՂԱԹԷԼ ԽԱՆ Մ. ԶՕՀՐԱԲԵԱՆ

Սաղաթէլը հնազանդելով իր ծնողքին, վերադառնում է իր ծննդավայրը եւ պաշտօնով մտնում Պարսից կայսերական բանկը։ Շատ չի անցնում եւ նա շուտով փոխադրւում է նոյն հիմնարկութեան Թէհրանի գլխաւոր տունը։

Այնուհետեւ բայց էր իր առջև առեւտրական ասպարէզը, որ փայլուն ապագայ էր խոստանում նրան. . . Բայց դա չէր հրապուրում նրան, նա տարբեր զգացումներ ունէր, ուրիշ կարգի հոգսեր վրդովում էին նրա հոգին։ Դեռ պատանեկութեան հասակից նա հետաքրքրւում էր իր հեռաւոր արիւնակիցների դառն վիճակով. նրանց տառապանքը մաշում էր նրա սիրտը. եւ նա միջոց էր որոնում օգնութեան հասնելու օսմանցի հային, մեղմելու նրա զրկանքները, պաշտպանելու նրան իր հարստահարողների դէմ։ Իր այդ բուռն փափաքը դրդեց նրան ծանօթանալու Դաշնակցութեան տեղական նորակազմ խմբի հետ, եւ կարճ ժամանակում նա սկսաւ եռանդուն աջակցութիւն ցոյց տալ հասարակաց գործերին, յեղափոխական տեսակէտից։ Բայց այդ գործունէութիւնն էլ բաւականութիւն չի տալիս նրա հոգուն, եւ վրէժինդրութեամբ լի ոգով դէպի իր ազգի հալածիչները, նա ներկայանում է Դաշնակցութեան խմբի ներ-

կայացուցչին իբրեւ կամաւոր։ Իզուր է վերջինս աշխատում նրան համոզել, որ յետ կանգնի իր յանդուգն դիտաւորութիւնից, բացատրելով նրան ֆէդայական չարքաշ կեանքի դժուարութիւնները, որոնց համար պատրաստած չէր նա կանխօրէն։ Նա ամբողջ մի ամիս փորձութեան է ենթարկուում. ո՛չ ծնողաց լաց ու կսկիծը, ո՛չ ազգականների աղերսը, ո՛չ ընկերների խնդիրքը եւ ո՛չ սիրած օրիորդի արտասուքն են կարողանում գէթ մի բօպէ կաշկանդել նրա անվեհեր հոգին. նա վճռել էր իր նահատակած եղբայրների վրէժը լուծել եւ այնպէս մեռնել. . . Անընդհատ անցնելով աւելի քան հազար վերստ, հասնում է նա այնտեղ, ուր խմբուում էին Դաշնակցութեան կամաւորները յուլիս 24-ի արշաւանքից առաջ։ Այդտեղ նրան աւելի մօտ ընկերները կրկին աշխատում են յետ պահել նրան, եւ վերջապէս որոշում են վերադարձնել տալ նրան իր քաղաքը։ Սաղաթէլը սպառնում է ինքնասպանութիւն գործել. գործի ղեկավարները տեսնելով նրա անզուսպ եռանդը եւ վախենալով, որ նա իր սպառնալիքը կիրագործի, էլ չեն հակառակում եւ վերցնում են նրան իրենց հետ։

Այդ անփորձ պատանին, որ փափուկ կեանքի էր միայն սովոր, առանց տրտնջալու համբերութեամբ կրում է իր զինուորի բեռը, ուրախ-զուարթ քայլում է ընկերների հետ, կարծես ցոյց տալու համար թէ նրանք սխալւած էին իր մասին։

Եւ արդարեւ, այդ քսանամեայ երիտասարդը, որին ընկերները դժուարանում էին առաջնորդել կռւի դաշտը, հմուտ զինուորականի սառնասրտութեամբ կռւում է իր ընկերներից մէկին օգնութեան գնացած ժամանակ, Արաւուլ լեռան ամէնաստորին դիրքում, որը պաշտպանում է այնքան ժամանակ, որքան հարկաւոր էր միջոց տալու վերջին կամաւորին լեռը բարձրանալու։ Բայց դիրքը վտանգի է ենթարկուում, սկսւում է երկուստեք կատաղի կռիւ, ամէնակատաղին ամբողջ արշաւանքում եւ չնայած շուտափոյթ օգնութեան, այլեւս անկարելի է լինում այդ դիրքում պաշտպանւել։ Այդ ժամանակ մինչդեռ կտրիճ երիտասարդը, պատասխանելով թշնամու հարւածներին, աւելի բարձր դիրքերն էր դիմում, ստանում է երկու վէրք, մէկը կողքից, միւսը ոտքից. բայց նա դարձեալ չի ընկճւում եւ կռւելով շարունակում է վեր բարձրանալ։ Թշնամին ժամանակ չի տալիս վէրքերը դարմանելու, արիւնը առատ հոսում է, մինչեւ որ ուժասպառ եւ արիւնաքամ նա հասնում է լեռան գագաթը, ուր մի-երկու ժամից յետոյ աւանդում է իր վեհ հոգին, ընկերների տաք համբոյրների տակ։

Հանդի՛ստ ոսկորներիդ, հերոս տղայ, դու եղար պարսկահայ առաջին ինտելիգէնտ նահատակը Սուրբ Գործի համար եւ պարսկահայը պարծենում է քեզնով։ Դու յաւերժացրիր քո անունը եւ քո վսեմ մահով պարտք ես դնում ընկերներիդ վրայ, լուծելու իրենց վրէժի վրէժը. հանգիստ քեզ „անհանգիստ“ հայրենասէր, քո յիշատակդ չի մնայ անհետ, ո՛չ էլ թափած արիւնդ՝ ապարդիւն. . .

ԹՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՒ ԱՂԱՆԵՐԸ

—

Վերջին մեր տեղեկութիւնները հաստատում են դրժբախտաբար մեր երեք ընկերների՝ Տիգրան Տէրոյեանի (Վազգէն), խմբապետ Միքէոյի ու Արշակի դառն, անփոխարինելի կորուստը։

Կորուստը մեծ է, իզուր չէին տաճիկ կառավարութեան գործակալները շտապում հեռագրերով աւետելու այդ իզուր աշխարհի։

Ընկան այդ երեք հերոսները ևս՝ հարազատ ծնունդ տաճկահայի թշւառութեան, սնւած նրա վրէժխնդրական թոյնով. գտան իրենց տենչալի մահը՝ հրացանը ձեռներին, մինչև վերջին շունչը արիաբար կռւելով։

Հին են Վազգէնի կառավարութեան անձնատուր լինելու խնդիրը և դրանից ծագած վանի երկարատև խռովութիւնները. վաղուց էր բացարձակ կռիւ յայտարարել սուլթանի կառավարութեան դէմ օրինական կեանքը կորցրած Վազգէնը։ Արժանաւոր փոխանորդ հանգուցեալ Պետոյի՝ նա իր անզուսպ եռանդով, իր նախանձելի ոգեւորութեամբ, իր աննկուն յեղափոխական ոգով, թէև միշտ հալածական, բայց միշտ կառավարութեան քթի տակ, գործում էր անվեհեր, բարձր պահելով Վասպուրականի յեղափոխական դրօշակը։

Կառավարութիւնը Վազգէնին ձերբակալել ուզեց դեռ 96 թ.-ի մայիսին, Վանայ հռչակաւոր կռւի նախընթաց օրերին։ Նոյն թւի սեպտեմբեր ամսին նոր ապարդիւն փորձ եղաւ ռուսաց հիւպատոսի միջնորդութեամբ նրան Վարդանի հետ միասին ձեռք ձգելու։ Ընթերցողը յիշում է անշուշտ դրանից առաջացած նշանաւոր երկօրեայ ճակատամարտը, որ վերջացաւ կառավարութեան կատարեալ պարտութեամբ։ Այդ կռւից յետոյ ևս Վազգէնը շարունակեց մնալ իր տեղում, ճարպկութեամբ խաղացնելով կառավարութեան պաշտօնեաներին։ Հայրենիքը ձգեց միայն Խանասորի արշաւանքը կազմակերպող ժողովին մասնակցելու համար, և Միքէոյի խմբի մէջ մտնելով, Բերկրիի կռւից յետոյ յաջողութեամբ նորից մուտք գործեց Վան։

Ֆէդայիների, մասնաւորապէս Վազգէնի այսպիսի յանդուգն կերպով երևան գալը՝ այս անգամ բոլորովին կատաղացրեց կառավարութիւնը։ Անգլիական հիւպատոսի անաջող միջամտութեան և անձնական ապահովութեան խոստման ապարդիւն փորձից յետոյ, նոր կռիւ բորբոքւեց, որ տևեց 5 ձիգ ամիսներ։ Կռիւ յայտարարւեց, բայց ոչ ուղղակի ֆէդայիներին, այլ անկէն, անմեղ ժողովրդին։ Բոլորն էլ փորձով գիտէին, որ զինաթափ լինելու առաջարկութիւններին ֆէդայիները մի պատասխան միայն ունեն տալու՝ Լէոնիդասի „արի՛ և ա՛ռ“-ը. յիշում էին մի տարի առաջ նոյնա-

նման դէպքում ստացած խիստ դասը, որից յետոյ ասկերարների քաջութիւնը ու անգլիական հիւպատոսի թնդանօթաձգական հմտութիւնը աւելորդ անգամ խայտառակութեան փորձին ենթարկելու հարկ չէին տեսնում։

Կառավարութիւնը լարեց իր ուժերը, երբ յայտնի եղաւ դաշնակցական զինուած նոր խմբի սահմանն անցնելու լուրը։ Խուզարկութիւններ, խմբովին բանտարկութիւններ, կոյր հալածանք, վայրենի սպառնալիքներ համայն հայ ժողովրդին, ամբողջ Այգեստանը պաշարուած... և այս բոլորը մի անհատ, մի Վազգէն ձեռք ձգելու համար։ Խղճալի՛ կառավարութիւն։

Սակայն այս անսպասելի գաղանութիւնների դիմաց Վազգէնը ստիպուած է լինում տեղի տալ։ Նա վճռում է... բայց ոչ անձնատուր լինել իր կեանքը փրկելու համար, — ոչ, դա դաւաճանութիւն կը լինէր ֆէդայու կոչումին, — Նա վճռում է համարձակ դուրս գալ, ճակատ ճակատի, „մերդ“ կռուի հրաւիրել զինուորների ամբողջ զօրութիւնը։ Շատախի առիւծ խմբապետ Միքէօն ու վանեցի Արշակը միանում են նրան. Կռուռուբաշում տեղի ունցած տաք կռուում ընկնում են բոլորն էլ։

Երեք նահատակ ընկերներ ևս գնացին միանալու նախորդների երկար շարքերին, թողնելով իրենց ճանաչողների սրտում խորին վիշտ ու անփոխարինելի կորուստի անհուն դառնութիւն. երեք անձնուրացներ ևս իրենց հերոսական կռուով ու կատարեալ արհամարհանքով դէպի մահը երկիւղի անջնջելի ազդարարութիւն դրոշմեցին թշնամիների հոգու մէջ և նոյն այդ մահով նոր յաղթանակ բերին յեղափոխական գաղափարին։

* * *

Յեղափոխականները սրբութեամբ կատարեցին իրենց պարտքը, ժողովուրդը ձեռքից եկածն արեց իր դատի ախոյեաններին պաշտպանելու համար.— այս բոլորը միթարական ու խրախուսիչ է։ Բայց ընդդիմադրութեան այս փայլուն պատկերի վրայ տարածւում է մի մեծ ու սև արատ՝ դա հայ աղաների, տխրահռչակ էֆէնդիների խաղացած զազրելի դերն է։ Վալիի հայ օգնականն է կառավարութեան աչքը բաց անում, հայ էֆէնդիներն են նրան ջերմ աջակից հանդիսանում, „կասկածելիների“ ցուցակ կազմելով, զանազան ազգակործան ծրագրեր կառավարութեան գլուխը լցնելով։

Շատ ժամանակ չի անցել. դեռ երէկ էին այդ ստոր բաքարշ արարածները քծնում մեր առաջ, սողում մեր ոտքերի տակ և մինչև իսկ իրենց ծայրայեղ յեղափոխականներ ներկայացնում... Կոտորածները դեռ տեղի չէին ունեցել, ռէֆորմեր էին պատրաստւում մտցնել, իրենց գիշատիչ գործունէութեան համար նպաստաւոր ապագայ էր բացւում. կառավարութիւնը շշմած էր և յեղափոխութիւնն էր հայ ժողովրդի աչքում հեղինակաւոր ուժը. այդ ուժի առաջ հարկ էին համարում կեղծել ու քծնել...

Իսկ այսօր նրանք ուժը կառավարութեան կողմը նկատելով, իրենց գձուձ գոյութիւնը պահպանելու համար, նրա հետ միացած՝ յեղափոխութեան դէմ են կռիւ յայտարարում։

Լաւ ենք ճանաչում այդ պարոններին. նորութիւն չէ դրանց ազգադաւ ընթացքը։ Նորութիւնը դրանց ստանձնած կեղտոտ դերն է։ Նախկին չօրբաջիները չեն այլևս ասպարէզի վրայ, որոնք եթէ հալածում էին յեղափոխականներին, չէին ծածկում, թէ այդ անում են վախկոտութիւնից կամ շահասիրութիւնից դրդուած. որոնք, մատնութիւնների դիմելով՝ զգում էին ներքուստ, թէ մի „վատ“ բան են կատարում և յեղափոխական պատիժը բնական էին համարում... Բայց մի երկու ամիս արժան յեղափոխութիւն ծախելուց յետոյ, չօրբաջիները յանկարծակի կերպարանափոխուեցան. այսօր դրանք ազգային դատի պաշտպաններ են, ազգի երջանկութեան մասին հոգացողներ, ազգի արևով երդւողներ...

Եւ եթէ այսօր մէկը, փաշայի ականջին գաղտնիքներ փսփսալով, դեղին ոսկիներ է գրպանը լցնում,— նա այդ անում է... ժողովրդի բարեկեցութեան համար. եթէ միւսը ոստիկանի բարկութեան առաջին ձայնից դողահար՝ պատրաստականութիւն է յայտնում իր հարևանին մատնելու,— դա վախկոտութեան նշան չէ, այլ խոհեմ և զգոյշ ազգասիրութեան. եթէ երրորդը չարամիտ խորհուրդներ է ներշնչում Վազգէններին արժատախիլ անելու,— նա աւելի բարձր պաշտօնի չի ձգտում, ժողովրդի արիւնով ցողուած ընծաներ չի ակնկալում, — չէ՛, նա ազգի մէջ աճած որոմներն է փրչացնում...

Նշանաւորն այսօր այն ներքին համերաշխութիւնն է, որ նկատւում է դրանց բոլորի մէջ. գիտակցութիւն է մտել նախկին չօրբաջիների դասում. երէկւայ ցիր ու ցան, իւրաքանչիւրն իր շրջանում առանձին գիշատողները իրենց շահերի ընդհանրութիւնն են ըմբռնել Եւ բարեսրտութեան, խոհեմութեան, ամէն տեսակ առաքինութիւնների շապիկը հագած այդ իժերը, թէ իրենց և թէ արտասահման չւած իրենց արժանաւոր եղբայրակիցների բերանով լրբութիւն ունեն հաւատացնելու աշխարհին, թէ իրենք են որ կան ազգի պահպան սիւները և թէ առանց իրենց անձնազոհ գործունէութեան, ազգը կորստեան անդունդը կը մտնէր Վազգէնների, Միքէօների ե ս ա ս ի ր ո ւ թ ե ա ն շնորհիւ...

„Զգէ՛ք յեղափոխութիւնը, թողէ՛ք ժողովուրդը հանգիստ մնայ“, ձայնում են Տարտիւֆները աղի արցունքն աչքերին։

Դուրս է գալիս, թէ հայ ժողովուրդը հանգստութիւն է վայելում, որը վրդովում են Վազգէնի նման

չարագործները։ Այդ հանգստութեան մասին մենք դեռ առիթ կունենանք խօսելու, սակայն ո՞ւմ համար պարզ չէ, որ ժողովրդի հանգստութիւնը չէ մեր աղաների պահանջածը, այլ իրենց սեփականը. ո՞ւմ համար պարզ չէ, որ ժողովուրդն այսօր նոյնքան հանգիստ է, որքան գայլերի ու բորենիների ճանկերի մէջ ընկած զոհը։

Շարունակեցէ՛ք ձեր հալածանքները, մատնեցէ՛ք, վերակազմեալ ջոջեր... հրճուեցէ՛ք, վերջապէս ընկան ձեր ատելի „խռովարարները", պարծեցէ՛ք ձեր տարած յաղթութիւնով...

Բայց ի՞նչ. այդպէս շո՞ւտ մոռացաք յեղափոխական տէռորիստի դանակը, նրա անվրէպ գնտակը։ Չէ՞ք թողնիլ, որ բացառապէս մեր գլխաւոր թշնամիով զբաղուենք. ձեր գլխի՞ն էք դարձեալ ուզում թափել տալ մեր կատաղութեան թոյնը...

Լա՛ւ. կը շարունակենք մենք էլ և կը հասնենք այն օրին —իսկ այդ օրը հեռու չէ— երբ դուք ձեր քծնող ժպիտով դարձեալ մեզ կը մօտենաք, բռնակալութեան դէմ որոտներ կարձակէք և ձեր ձեռքով նահատակուած վազգէնների շիրիմի վրայ ձեր ձեռքով անթառամ պսակներ կը շարէք։

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

—

16/28 դեկտ. 1897

Հեռագիրը յանկարծ հաղորդեց պարսկական սահմանէն անցնող 100 հոգինոց դաշնակցական նոր խումբի մը մասին։ Այս ի՞նչ սև լուր էր որ եկաւ այսպէս ձիւն-ձմեռ օրով տխրեցնելու ցնորուած Շէմսիի և մահմէդական ամբոխի հոգին։ Չէ՞ որ բնութեան, ձմեռուան բարիքներու շնորհիւ հազիւ թէ միամտած, հանդարտած էին անոնք։ Բայց կատակ ընել կարելի չէր, որովհետև հեռագիր տուողը Ատրպատականի օսմ. հիւպատոսն էր։ Բարեբախտաբար, կուսակալի օգնական կեղտոտ հայը իր իմաստուն խորհուրդներով շտապեց բացատրութիւն տալ կուսակալին, թէ խումբը սահմանը անցած է քաղաքի մէջ ապրող Տիգրանի խորհրդով, և թէ միակ Տիգրանը ոչնչացնելով, կարելի է առաջն առնել։ Բայց ի՞նչ ընել ի՞նչ միջոցով կարելի է Տիգրանը ձեռք բերել, որու համար արդէն երկա՛ր աշխատանքներ զուր անցած էին։ Պէտք էր միաժամանակ գործ դնել խիստ և մեղմ միջոցներ։

Ցաւն այն է որ զօրքերը Վասպուրականէն քաշուած լինելով՝ հնարաւորութիւն չկար շտապով ետ կանչելու, ձիւն-ցուրտի պատճառով։ Եղած քանի մը հազար զօրքերն անմիջապէս շարժուն վիճակի մէջ դրուեցան, ամբողջ Այգեստանը շղթայի մէջ առնուեցաւ 1/13 դեկ.-ին։ Գիշեր ցորեկ սկսան արթուն կերպով հսկել արգիլելու համար սահմանն անցնող կարծեցեալ խումբի մուտքը Այգեստանի մէջ։ Ամէն գիշեր Այգեստանի մերձակայ գեղերը պաշարուեցան մինչև լոյս։ Զինուորները ցուրտէն և ֆէդայիի սարսափէն ամբողջ գիշերներ դողալով կ՝աղօթէին, որ ֆէդայիները իրենց չհանդիպին և ընդհարում տեղի չունենայ, համոզուած լինելով որ իրենք են պարտուելու։ Իսկ տաճիկ ամբոխը ի՞նչ զարհուրելի սարսափով համակուեցաւ։ Լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ ամբողջ Վասպուրականի մէջ և ընդհանուր սարսափ մըն էր որ պատեց մահմէտական ամբոխը. երկրի խորը գտնուող որ քիւրդին որ հանդիպէիր, պիտի յայտնէր թէ քանի մը հազար ֆէդայիներ սահմանն անցան, կոտորելով առաջ կուգան, վա՛յ միւսիւլման ժողովրդին։

Վերոյիշեալ կարգադրութիւններէն ետք կառավարութեան կը մնար խորհիլ Տիգրանը ձեռք բերելու միջոցներուն վրայ։ Հայ մարդը, իր նման քանի մը կեղտոտ իշխաններու հետ՝ ցանկ մը պատրաստեցին որպէս Տիգրանին պահող մարդոց և անոր կուսակիցներու. ու կուսակալի միջոցով ոստիկանութեան տուեցաւ այդ ցանկը, անմիջապէս ձերբակալելու համար այդ մարդիկը։ Հրահանգ տուեցաւ ոստիկաններուն ձերբակալել նաև բոլոր իրենց գիտցած կասկածելի մարդիկը։ Սկսած էր կամայական գործերու շրջանը. ի՞նչ զզուելի վարմունք, ի՞նչ անխիղճ կաշառակերութիւններ, անմեղն ու մեղաւորը յայտնի չէր. ամէնքը պարտական էին հացկատակ ոստիկաններու որկորները լեցնել, եթէ ոչ բանտ պիտի մտնէին։ Դեռ կը շարունակուի այդ դրութիւնը, միայն այս անգամ քիչ մը չափաւոր և մութին մէջ։

Հայ ժողովուրդը, որ անտարբեր կը դիտէր հրապարակի խաղերը, սկսաւ ինքն ալ սարսափիլ։ Քանի մը երիտասարդներու ձերբակալելէն ետք ասպարէզը ամայացաւ այլևս, երիտասարդութիւնը անհետացաւ։ Ոստիկանները ստիպուեցան տունները մտնել և ոչ շատ խիստ միջոցով՝ խաբելով համոզելով յաջողեցան հետզհետէ աւելցնել ձերբակալուածներու թիւը։ Դեռ կը շարունակուին ձերբակալութիւնները... Շատ շատերը չէին համարձակիր տուներէն դուրս ելնել...

Կառավարութիւնը պահանջեց և կը պահանջէ ձերբակալուածներէն ցոյց տալ Տիգրանի պահուած տեղը և՛ն։ Կանչուեցան հայ թաղապետները, ամենախիստ սպառնալիքի տակ պահանջուեցաւ Տիգրանը կառավարութեան յանձնել, հակառակ պարագային, որտեղ որ գտնուէր՝ այդ թաղը ամբողջ կրակի պիտի մատնուէր։ — „Մի՞թէ Տիգրանը սուլթանէն աւելի կը սիրէք որ չէք ուզեր կառավարութեան յանձնել և այսչափ խնամով կը պահէք, ու ձեր վստահութիւնը կը պակսեցնէք կառավարութեան քով"։ Այսպէս կը համոզէր Միրալայը թաղապետներուն։ Վերջէն, բոլորէն ստորագրութիւն առնելով — Տիգրանը չպահելու համար — բաց թողին, պահանջելով որ թաղապետներն ալ իրենց թաղի բոլոր երիտասարդներէն ստորագրութիւն առնեն նոյն նպատակով։

Ձերբակալութիւններու հետ, կառավարութիւնը ըսկսաւ դուրս հանել քաղաքէն և բոլոր թշուառ գեղացի գաղթականները՝ այս սարսափելի ցուրտերուն. ասոնց մեծ մասը, կին ու տղայ էին. որովհետև այնպէս համոզուած էր որ, Տիգրան իր ընկերներով գաղթականի հագուստով ծպտուած ազատ կը պտըտին ու այնպէս կը պահուին։ Այդ ողորմելի գաղթականներու վիճակը անկարելի է նկարագրել. անօթի, մերկ, ոտաբոբիկ, ատամները զըկզկացնելով, օրերով ձիւնի վրայ քալելով՝ քանի՞ներ արդեօք կենդանի պիտի հասնէին իրենց ամայի գեղը, ուր աւերակ մոխրակոյտ մը միայն մնացած է։ Երևակա-

յեցէք այս աստիճան գաղանութիւն բարեխնամ կառավարութեան կողմէն։ Իսկ միսիոնարներու ձեռքով այդ թշուառ գեղացիներուն տրուած նպաստները (եղ, կորեկ ևն.) մեծ մասը կառավարութեան գրպանը կը լեցի. բռնի կերպով կ'առնէ իր տուրքերու փոխարէն, և մարդասէր Եւրոպայի ներկայացուցիչները լուռ հանդիսատես են այս բոլոր գաղանական արարքներուն։ Թէև անգլիական հիւպատոսը նպաստներու մասին դիտել տուաւ կուսակալին՝ սակայն ի՞նչ նշանակութիւն ունի անգլիական հիւպատոսի մը դիտողութիւնը, կառավարութիւնը գիտէ իր ընելիքը։

Կատաղի գազանը աւելի ու աւելի առաջ կ'երթար իր շահատակութիւններու մէջ, միևնոյն ժամանակ հիւպատոսներուն և ամէն տեղ կը յայտարարէր, որ Տիգրանը գայ յանձնի կամ խօսք տայ յանձնելու, որ հիւպատոսին որ կը վստահի անոր հովանաւորութեան տակ մտնէ, մինչև որ ինք սուլթանէն յատուկ իրադէ բերել տայ, ապա դուրս գայ ազատ պտրտի։ Գրանսական հիւպատոսն ալ յայտարարեց թէ իրաց վիճակը գնալով աւելի պիտի ծանրանայ, եթէ Տիգրանը խօսք չտայ յանձնելու, և հաւանական է շատերը աքսորին առանց քննութեան։ Թող վստահ լինի Տիգրան, որ բանակցութիւնները ինպաստ իրեն կը կատարուին, եթէ միայն խօսք տայ յանձնելու։ Հակառակ պարագային խիստ խուզարկութեամբ մը պիտի ձերբակալուի և պատժուի, իրեն հետ գուցէ և շատերը։

Բայց վերջապէս վախճան մը պիտի ունենային կառավարութեան այս սանձարձակ արարքները։ Ասպարէզ իջաւ նորընտիր առաջնորդական տեղապահ Ստեփան վարդապետը։ Ազդու և խիստ միջոցներով պահանջումներ ըրաւ, կառավարութեան դիտել տուաւ կատարուած կամայականութիւնները, իրաց ներկայ վիճակի ծանրութիւնն ու անոր հետևանքները։ Պահանջեց անմիջապէս առաջն առնել, ապա թէ՝ ոչ՝ ինք հեռագրելով և տեղեկագրելով իրաց վիճակը ուր որ պէտք էր, իր հրաժարականը պիտի տար։

Կուսակալը ակամայ զիջաւ այդ տեղ և խօսք տուաւ առաջնորդին խստութիւնները մեղմացնել, հասած չհասած մարդիկ չձերբակալել, գաղթականներն այլևս դուրս չհանել և դուրս հանածներն ալ ետ կանչել. միայն թէ առաջնորդն ալ կառավարութեան հետ աշխատի համոզելով կամ խիստ միջոցով Տիգրանը ձեռք բերել։ Առ այս առաջնորդը պարտաւորեցաւ շրջաբերական մը հանել եկեղեցիները, յորդորելով ժողովրդին, որ Տիգրանը չպահեն ևն։

Հաւաքած գաղթականները բաց թողուեցան, դուրս հանուածները ետ դարձուեցան քաղաքը, Տիգրանի պատճառով ձերբակալուածներէն մաս մը ազատ արձակուեցան, և խստութիւնները մեղմացած են աստիճան մը։ Ոստիկաններուն խիստ կերպով հրամայած է սակայն կուսակալը մինչև որոշուած օրը Տիգրանը գտնել անպատճառ, եթէ ոչ, իրենք պիտի պատժուին անոր փոխարէն։

Այս է Վանի ներկայ վիճակը, չենք գիտեր ո՞ւր յանգելու է վախճանը։

Ց. Գ. — Որչափ որ առաջնորդը խօսք տուած էր Տիգրանի համար շրջաբերական հանել եկեղեցիները, բայց չէ հանած տակաւին։

ՎԱՆԻ ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քաղուածաբար կը թարգմանենք „Սթանդարդ"-ի Վիէննայէն մեկ թղթակցութիւնը, 26 յունուար թուակիր։

Վանի հիւպատոսական տեղեկագրերը կը հաստատեն թէ թիւրք կառավարութիւնը պատրուակ ընելով կովկասցի յեղափոխական Տէրոյեանի ներկայութիւնը, հայերը հալածել սկսաւ։

Ոստիկանութիւնը կ'ըսէ թէ Տէրոյեան ապստամբութիւն հանելու եկեր է, եւ եթէ հայերը որոշեալ ժամանակի մը մէջ չյանձնեն զինքը, ամէնքն ալ մեղսակից պիտի սեպուին։

Հայերը կ'ուրանան անոր մասին, եւ Վանի առաջնորդն ալ իր հօտին կը ձայնակցի։ Բայց ոստիկանութիւնը կը շարունակէ խուզարկել հայերուն տունները եւ անխիղճ ձերբակալումներ ընել։ Դողը տիրած է քրիստոնեաներու մէջ. նաեւ քաղաքին մահմէտականներուն մէջ լուր տարածուած է թէ Պոլսէն հայերը հալածելու ու ջարդելու նոր հրահանգ եկած է։

Քաղքենակ մահմէդականները, բացի քանի մը մոլեռանդներէ, չեն ուզեր եղած բաւական վայրագութիւններուն կրկնուիլը։

Ստացուած տեղեկութիւններու համաձայն, կոտորածներու կրկնումը սուլթանը եւ Թիւրքիան սարսափելի դրութեան մէջ պիտի դնէ. . .

Նշաններու պէտք չկայ ըսել թէ, Ռուսիա պատրուակ կ'որոնէ իր բանակները Օսմ. Հայաստան քալեցնելու. եւ ցաւալի զուգադիպութիւն մը՝ որ թիւրք իշխանութիւնները կը հաւատան թէ յեղափոխական գործակալները Կովկասէն կուգան. . .

Պէտք է նկատել որ Ռուսիոյ թիւրքիոյ վրայ ազդեցութիւնը, ուրկէ սուլթանը այժմ կը ջանայ ճողոպրիլ, հայկական ջարդերէն կրսկսի։ Ինչ ալ ըլլայ, Վանի ներկայ դէպքին մէջ Ռուսիոյ մատը կայ. . .

—o—

Ծանթ. Խ. — Սաստկապէս կը բողոքենք Սթանդարդի այդ սադրանքներուն դէմ. բողոքող, յեղափոխական հայը իր խղճին միայն գործիքն եղած է, և ուրիշ ոչինչ։ Վազգէնը, — որ կովկասցի ներկայացնելով, ռուս կառավարութեան գործակ կ'ուզէ ցոյց տալ, — բնիկ վանեցի էր և տեղական ծանօթ ընտանիքի զաւակ. իր քոյրը օր. Զարուհին այսօր աքսորի դատապարտուած է։ Սօլըզբերիի օրգանէն գոնէ այնքան խղճմտութիւն կրսպասուէր որ մեր ինդրին մէջ Սօլըզբերիի կատարած ամենալի նահանջէն ետք, չելլար այդպիսի լրբութեամբ թշնամանելու հարիւր հազարաւոր նահատակներու յիշատակը, որոնց արիւնին մեծ մասը անգլիական խղճին արատը պիտի մնայ յաւէտ.

ՆԱՄԱԿ ԲԱՂԷՃԷՆ

Հոկտ. 30/11 Նոյեմբեր 1897

Թէև շատ անգամ գրած է տաճիկ կառավարութեան բարբարոսութիւններու մասին, բայց ստիպուած ենք նորէն գրել՝ տեսնելով նորանոր դէպքեր, ուր կառավարչական պաշտօնեաներն են անմիջական դերակատարները։

Հոկտեմբերի սկզբին, Կ ծ ւ ա կ հայաբնակ գիւղի

շրջակայքը կը գտնեն քիւրդի մը դիակը. կառավարութիւնը հայերուն վրայ ձգելով այդ սպանութիւնը, գիւղին մէջ կըսկսի խուզարկութիւններ։ Գիւղացոց մեծ մասը կը թողնեն տուն ու տեղ, կին ու տղայ կը վերցնեն և կը փախչին մերձակայ գիւղերը։ Ոստիկանները կըսկսին սաստկապէս ծեծել-տանջել գիւղը մնացողները և տները կողոպտել ու աւերել։ Եռքն ալ 20 հոգի կը բռնեն ու կը տանին Խլաթի բանտը։ Փախած գիւղացիք վերադարձին իրենց տները կիսաւեր դրութեան մէջ կը գտնեն. խեղճերը շարած են, չգիտեն ինչ ընեն, ի՞նչպէս անցնեն այս սոսկալի ձմեռը։ Այդ բոլորի պատճառ եղող քիւրդի սպանութիւնը, ինչպէս եռքը իմացուեցաւ, կատարած է եղեր իր ընկերը, կողոպտելու նպատակով։

Ամսուս կէսին, քաղաքիս „թապուր աղասին“ 40 ձիաւորով կ'երթայ հայ գիւղերը խուզարկելու, յեղափոխական գտնելու պատրուակով։ Ուրտափ ու Թուխ հայաբնակ գիւղերու մօտ տեսնելով երկու կասկածելի տեղացիներ, ձերբակալել կուտայ ու կըսկսի ծեծել ու տանջել, ըսելով թէ յեղափոխականներ են։ Մինչդայն ատեն այդ երկու գիւղերուն մէջ խիստ խուզարկութեան կը ձեռնարկեն. ծեծի կ'ենթարկեն ոչ միայն այրերը, այլև կիները։ Իսկ զինուորները ամբողջ գիւղը կ'աւերեն ու կը կողոպտեն։ Ուրտափ գիւղի մէջ, չորս զինուոր, չորս տուներու մէջ ամբողջ օր մը փակուած, կը բռնաբարեն ու կը տանջեն կիները։ Թուխ գիւղի մէջ երկունքի մէջ գտնուող կին մը ծեծի տակ կը վիժէ իր զաւակը։ Բնորոշ է և „թապուր աղասի-“ին ըսածը՝ կնոջ մը հարցաքննութեան ատեն, թէ „այսինչ բանը ուղիղն ըսէ, թէ ոչ՝ այժմ հրաման կուտամ բոլոր զինուորներուս որ քեզ լլկեն“։ Այդ բանը ինքը կինը իր բերնով պատմեց մեզ։ Ամբողջ երեք օր այդ երկու գիւղերը կատարելապէս աւերելէն եռքը՝ 15 հոգի ալ կը բռնեն ու կը խրկեն տեղիս բանտը, սարսափելի չարչարանքներու ենթարկելով։

Այդ տեղէն „թապուր աղասին“ կ'երթայ Դատուան. հոն ալ զանազան պատրուակներով դարձեալ նոյն ծեծ ու բռնութիւնները, վերջը քանի մը հոգի ալ այդ տեղէն կը բռնէ և քաղաք կը բերէ։ 3-4 գիւղ այսպէս աւերելով կը վերադառնայ, քաղաքիս մէջ բանտարկուած անմեղ հայերու թիւին 40 հոգի ալ աւելցնելով։ Բանտի մէջ կըսկսին նոր ծեծ ու տանջանք, ասս ալ հարցաքննութեան իբր բաժին։ Գիւղացիին այնպիսի բաներ կը հարցնեն որ երբեք լսած ալ չէ. բայց երբ կը պատասխանէ թէ „չգիտեմ“, դարձեալ ծեծ ու տանջանք։ Ծեծի տակ անոնցմէ մէկուն բոլոր ոսկորները ջախջախեցին ու մահուան դուռը հասուցին. միւսը սաստիկ ծեծելէն եռք՝ գլխիվայր կախեցին աղբանոցի մէջ, երրորդին մարմնի զանազան մասերը խարեցին, և դեռ ուրիշ շատ տանջանքներ որոնց գիւտով թիւրք բարբարոսութիւնը կրնայ պարծիլ։

Քանի մը օր առաջ ալ, մօտ 250 զինուոր թնդանօթներով նոյն „թապուր աղասի“-ի առաջնորդութեամբ շտապով կ'երթան Դատուան, լսած լինելով թէ՝ 30 յեղափոխական կայ գիւղին մէջ։ Գիշերով կը պաշարի գիւղը, իրենցմէ քանի մը հոգի կը մտնեն խուզարկութիւններ կատարելու. կը տեսնուի որ օտար մարդ չկայ գիւղին մէջ, կը պաշարեն եկեղեցին, ու առաւօտեան աղօթքէն եռք դուրս ելնող քանի մը քաղաքացի առևտրականներ ու գիւղացիներ թուով մօտ 15 հոգի՝ ձերբակալելով գիւղական քահանայի հետ կը վերադառնան քաղաք ու կը բանտարկեն։ Աւելորդ է կրկնել որ ատոնք ալ տանջանքներէ զերծ չեն մնար. բանտարկեալներէն մէկը ծեծի չդիմանալով՝ այս օրերս բանտին մէջ մեռաւ։

Հիմա տեղիս բանտարկեալներու թիւը, հին բանտարկեալներով միասին՝ հարիւրը կ'անցնի։ Քաղաքիս մէջ նոյնպէս խուզարկութիւնները շատցած են. շաբաթ չանցնիր որ տուներ չխուզարկուին։ Վերև նկարագրուած բոլոր այդ իրողութիւնները տեղի ունեցած են միայն այս ամսուս, հոկտեմբերի մէջ, կառավարութեան պաշտօնեաներու ձեռքով, այսինքն այն մարդոց, որոնց վրայ դրուած է երկրի խաղաղութիւնն ապահովելու պարտքը։ Իսկ գալով քիւրդերուն՝ ասոնց գործած ամէնօրեայ հարստահարութիւնները, կողոպուտն ու սպանութիւններն անթիւ են. այդ մասին հետևեալ անգամ։

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ԻՐ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

II

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Եւրոպական Թիւրքիոյ ամէնէն հիւանդ մասը կարելի է համարել Մակեդոնիան։ Թիւրքիոյ համար յարաձուն և օրէ օր սպառնական հանգամանք մը առնող մտատանջութիւններու, ժայթքումներու հրաբուխը կայ հոն։ Բայց Մակեդոնիան հիւանդ է և իրենց մակեդոնացիներուն համար. քաղաքական ներհակ ուղղութիւններ անզօր և ջլատած կը դնեն զինքը իր դարևոր բռնակալին դիմաց։

Մակեդոնիան իլլիրական թերակղզին՝ ոչ միայն ամէնէն արգաւանդ երկիրը կը համարուի, այլ և իր աշխարհագրական դիրքին շնորհիւ կոչուած է առաջնակարգ դեր մը կատարելու իր դրացիներուն տնտեսական զարգացման պատմութեան մէջ. այդ երկիրը Միջերկրականի բնական դուռը կը նկատուի բալկանեան պետութիւններու և Աւստրիոյ համար։ Աւստրիացի, հէլլէն, սէրբ և բուլղար օրինական ժառանգորդներ կը ներկայանան այդ երկրին։ Իր խայտաբղէտ բնակչութիւնը — մեծագոյն մասը սլաւ, մնացորդը ռումէն և հէլլէն — նպաստաւոր պատանդան մը կը ծառայէ բոլոր այդ յաւակնութիւններուն։ Եւ ահա կոյր, ոխալից, անհաշտ պայքարի մը ասպարէզն եղած է այդ դժբախտ երկիրը. ցեղական-քաղաքական ներհակութիւնները գրգռուած և լարուած են այն աստիճան, որ յանուն այդ պայքարին տեսանք սէրբ ձեռքեր արիւնակից բուլղարին արիւնին մէջ թաթխուած...

Բայց այդ կռիւներն անզօր են մոռցնել տալու մակեդոնացիին իր արիւնոտ խոցը։ Մակեդոնիան իր „խընդիրն“ ունի, նոյն պատճառներէ ծագած, ինչպէս բոլոր համանման „խնդիրները“ Թիւրքիոյ մէջ՝ սուլթաններու բռնակալ ռէժիմը։ Նմանութիւնը լրիւ ընելու համար մերինին հետ, հոն ալ քիւրդին դերը կատարող մը չի պակսիր. իսլամ ալբանացին է ատ։ Մակեդոնացին իր խոր վէրքն ունի. և այդ դարևոր տառապանքնե-

բու ցաւագին աղաղակն է որ կը ճախրէ այսօր Մակէդոնիոյ վրայ. իր ստրկութեան դառն գիտակցութիւնը տիրապետող տօնը կը կազմէ մակէդոնական ամբողջ էութեան։

Ցարատև, անյողդողդ և լուսամիտ ջանքերու արդիւնքն եղաւ ինքնաճանաչութեան զարթնումը Մակէդոնիոյ մէջ։ Բուլղար տարրը կը կազմէ ստուար մեծամասնութիւնը այդ երկրին մէջ, և շատ բնական էր որ անոնք ալ տին առաջին զարկը այդ շարժումին։ Այդ շարժումը նախ կռիւ հրատարակեց իր ամէնէն վտանգաւոր թշնամիին՝ համհելլէնական գաղափարին. իր առաջին նպատակը դրաւ սլաւ ցեղերն ազատել հելլէնացումէն և ազգային գիտակցութիւնն արծարծել։

Բուլղար գործիչներու կուռ շարք մը գործին գլուխն անցաւ. ոչ ձեռնհասութիւն պակսեցաւ, ոչ անձնուիրութիւն. բուլղար եկեղեցին նոյն շահերն ունէր, և իր հեղինակութիւնը՝ կրօնական ու քաղաքական, առաջնորդեց այդ շարժումին։ 1857-էն մինչև 1872 ամբողջ արևմտեան Մակէդոնիան յոյն եկեղեցականութեան ձեռքէն խլեցաւ. բուլղար եկեղեցին ու դպրոցը վերըստացաւ իր այն իրաւունքները, որ յոյները իւրացուցած էին և չարաչար գործածած երկար ու ձիգ դարեր։ Եւ Ռուսիան օգնութեան հանաւ բուլղարներու մղած պայքարին. ինքը համալսաութեան ռահվիրան՝ բնական թշնամին էր համհելլէնական գաղափարին։ Ռուսական քաղաքականութիւնը քաջալերեց այդ ջանքերը և 1870-ին հարկադրեց Բ. Դուռը ճանչնալու բուլղար էքզարքութեան մը գոյութիւնը, կատարելապէս անկախ յոյն պատրիարքէն։

Անհուն յաջողութիւն մը բուլղարներուն համար։ Բայց բախտը դեռ չէր սպառած իր շնորհքները։ 1879-ին հաստատեցաւ բուլղար իշխանապետութիւնը։ Քաղաքական կեանքի թաւականը բացուած էր. յոյսերու մէկ մասն իրագործուած. կը մնար շարունակել հարթուած ճամբով. ջանքերը կրկնապատկուեցան՝ մէկ կողմէն հելլէնականութեան ձեռքէն խլելու Մակէդոնիան, միւս կողմէն թիւրք բռնապետութեան։

Բ. Դուռը իր հին քաղաքականութեան անսալով՝ շատ չընդդիմացաւ ռուսական թելադրումներուն. կրօնական երկպառակութիւններով տկարացնելու համար իր քրիստոնեայ հպատակները, քաջալերեց Էքզարքարանի միտումները։ Բուլղարները քայլ առ քայլ առաջ տարին իրենց կուլտուրական նուաճումը. և հետզհետէ յաջողեցան համազգի եպիսկոպոսական աթոռներ հաստատել բոլոր այն գաւառներուն մէջ, ուր բուլղար քահանան ու վարժապետը արդէն պատրաստած էին հողը։

Եթէ մէկ կողմէն թիւրք կառավարութիւնը կամայ կամ ակամայ Մակէդոնիոյ բուլղարներուն հելլէնացումէ ազատագրութեան և վերածնութեան հզօր ազդակներէն մէկն եղաւ, բայց իր անհեռատես քաղաքականութեամբ այդ ժողովրդին երախտագիտութիւնը չկրցաւ շահիլ։ Շատ սխալ հաշիւ ըրաւ արթնցնելէն ետք, բռնի քնեցնել ուզելով։ Իր յարուցած հալածանքները, հարստահարութիւններուն յաճախիլը, բնականաբար ոխ ու վրէժ կրցան միայն ներշնչել թշնամի դարձուցին մակէդոնացի բուլղարը, որ իր դաշնակիցը կրնար ըլլալ հոն։ Եւ կուլտուրական կռիւը, թէև բաւական ուշ, յեղափոխական դրոշմ ստացաւ։ Սահմանակից ազատ Բուլղարիոյ գոյութիւնը մակէդոնացոց տենչերուն յենակէտն եղաւ։ Իսկ այդ երկու քոյր երկիրներու միջև տեղի ունեցող անընդհատ յարաբերութիւնները հնարաւոր կարծել տին ապստամբական կուռ մը պատրաստութիւնն ու իրագործումը. կազմակերպուեցան կոմիտէներ, և ամէնէն յայտնին անոնց մէջ, Մակէդոնական Գերագոյն Կոմիտէն։ Սասունի արիւնահեղ դէպքերը հոն ալ ունեցան իրենց հակահարուածը. ոգևորութեան շունչ մը էր որ կարծես սլացաւ Տարօնէն դէպի Վարդարի հովիտը... Պահ մը կարծուեցաւ, 95-ին, թէ մօտալուտ էր հրդեհը. ահա՛ ոտքի պիտի ելլէր ազատ Բուլղարիան, իր մակէդոնացի եղբայրը բռնակալի ճիրաններէն ազատելու... Կազմուեցան հռչակաւոր „էֆէտա"-ները, ֆէդայական խումբեր, որոնք բուլղար սպաներու առաջնորդութեան տակ, սփռուեցան Մակէդոնիոյ մէջ, ընդհարումներ ունեցան թիւրք կանոնաւոր զինուորներու հետ, յաճախ յաղթեցին, և նեղը դրին թիւրք կառավարութիւնը։

Ցուսախաբութիւնը շուտով յաջորդեց սակայն. Մակէդոնիան չապստամբեցաւ, դեռ շատ վաղ էր ատ յուսալ. իսկ շարժումը, որ արհեստական կերպով առաջ բերուած էր բուլղար կառավարութեան կողմէն, կանգ առաւ իսկոյն, երբ վերջինս իր ակնկալած արդիւնքն ստացաւ։

Թիւրքիան և Ռուսիան կը յամառէին դեռ Ֆէրդինանդը իբր Բուլղարիոյ իշխան ճանչնալու. և Ֆէրդինանդը փորձով ցոյց տալ ուզեց թէ թշնամի Բուլղարիա մը ի՞նչ անհաճոյ անակնկալներ կարող է պատրաստել թիւրքերուն։ Երբ սպասուած տպաւորութիւնն իրականացաւ, բուլղար կառավարութիւնը փոխեց իր ընթացքը և „էֆէտա"-ները անհետացան... Քիչ ետք ամբողջ Բուլղարիան ապուշ կտրեցաւ, լսելով նոր օրէնքի մը հրատարակումը, որ մահուան պատիժ կը սահմանէր բոլոր անոնց, որ համարձակէին Բուլղարիայէն Մակէդոնիա անցնիլ զէնքը ձեռքին։

Տեսակ մը հակազդեցութեան և անգործութեան շրջան մը սկսաւ անկէ ետք, և շատ բնական էր ատ, քանի որ ժողովրդային չէր եղած այդ շարժումը, այլ քաղաքական միջամտութեամբ սկիզբն առած ու վերջ գտած։ Իսկ Մ. Գ. Կոմիտէն, մակէդոնական խնդրով զբաղող միակ լուրջ մարմինը, չխրատուեցաւ փորձէն, շարունակեց հաւատք ընծայել կառավարութեան խոստումներուն և հաւաստիքներուն, վերջապէս անոր սրինգովը պարել։ Պիտի զարմանայինք եթէ հակառակն ըլլար. Կոմիտէին գործերը վարելու կոչուած էին վաճառականներ ու բարձրաստիճան պաշտօնատարներ — այսինքն մարդիկ, որոնք իրենց շահերով, համոզումներով, խառնուածքով, նոյնքան մօտ են յեղափոխութեան գաղափարին, որքան երկինքը երկրին։ Այդ կարգի մարդոց ներկայութիւնը Մ. Գ. Կոմիտէին մէջ ըմբռնելի էր, ցորչափ վերջինս նկատուէր Մակէդոնիոյ անկախութիւնն իրականացնելու համար դրամով և հեղինակութեամբ աջակցող մարմին մը բուլղար կառավարութեան։ Բայց Ֆէրդինանդի դերը պարզուած էր արդէն. Մ. Գ. Կոմիտէն եթէ կ'ուզէր իր գոյութիւնն արդարացնել, յեղափոխական կազմակերպութեան մը պէտք էր փոխուէր։ „Ազգասէր"-ներու շրջանն անցած էր ալ. այլ էր պահանջը, այլ մարդիկ պէտք էին հիմա. վաճառականին դրամը չէր խնդրին լուծումն ապահովողը. „Ազատ Մակէդոնիոյ"

անունով վերջերս շրջաբերութեան հանուած պարտաւորները հազարաւոր ֆրանքներ բերին լեցուցին Կոմիտէին արկղը. դրամը չէր որ կը պակսէր, այլ յեղափոխականին անվկանդ հաւատքը, շեշտահար սուրը, և անոր կարմիր ու ամբիծ արիւնը...

Բայց այդպէս չեղաւ դժբախտաբար։ Բարդ են այդ երևոյթին պատճառները և դժուար է այժմէն ճշդել։ Անձնուիրութիւն և խելք անշուշտ պակսած չէ բուլղար երիտասարդութեան, ոչ ալ կարելի է ըսել թէ բուլղար ժողովուրդը համեմատաբար խաղաղ կեանքին մէջ շատ շուտ մոռցաւ իր նախկին տառապանքները և հիմա անկարող է մակեդոնացի իր եղբօր վիճակը պատկերացնել։ Իր մեզ ցոյց տուած խորին համակրութիւնը և մեր գաղթականներուն աջակցութիւնը տարակոյս չի թողուր այդ մասին։ Թերևս սխալ չըլլար ուրիշ ենթադրութիւն մը. բուլղարները իրենց քաղաքական ազատութիւնը ոչ այնքան ազգային՝ միակ՝ հզօր կազմակերպութեան մը որոշ ճիգերուն կը պարտին, որքան արտաքին միջամտութեան մը՝ ռուսական սուիններուն։ Թերևս նախաձեռնութեան ոգին է որ կը պակսի. երբ կառավարութիւնն իր ձեռքն առաւ „չէտա"-ներու գործը, հարազարաւորներ վազեցին սահման. երբ արգիլեց, ամէն մարդ քաշուեցաւ իր տեղը, թէև բողոքելով։

* *

Բայց դէպքերը զգլխիչ արագութեամբ կը յաջորդեն իրարու, անսպասելի հետևանքներով. երէկուան անհնարին կարծուածը այսօր արտակարգ չի թիւր։ Եթէ յոյսերով կրնայ օրօրուիլ Բուլղարիան և սպասել, Մակեդոնիան, որ շարժումի մէջ է, այսօր ան չէ, ինչ որ կէդոնիան։ Բարի ոգի մը կարծես կը մղէ Թիւրքիան անէրկ էր։ Բարի ոգի մը կարծես կը մղէ Թիւրքիան անդուլ անդադար դէպի իր օրհասը. ճակատագրին մէկ հեգնութեամբ, Թիւրքիան ինքը կը փորէ իր փոսը։ Քունը երբեք չպիտի յաղթահարէ սուլթանի հպատակներուն. կրնան ապահով ըլլալ։ այդ ռէժիմի գոյութեան պայմանն է ինքն իր ձեռքով իր աւերիչ տարրերն ստեղծել, արթուն և գործօն պահել արդէն եղածները...

95-ի „չէտա"-ներու երևումը ազդարարութիւն մը չեղաւ Բ. Դռան համար. մակեդոնացիներու բողոքը ոճիր մը նկատեց. բայց շատ հաճեստ էր անոնց պահանջածը՝ Բէրլինի դաշնադրութեամբ գծուած տրամադրութիւններուն իրագործումը։ Ամէն ձգտում և խլրտում իր սաղմին մէջ խեղդելու համար, Մակեդոնիոյ մէջ ևս հաստատարութեան նոյն սիստէմը ձեռք առաւ, ինչպէս Հայաստանի։ Դռան այդ քաղաքականութիւնը չվհատեցուց մակեդոնացին, աւելի դառնացուց զինքը, բայց աւելի վճռական ըրաւ։ Մակեդոնացին ըմբռնեց իր փափուկ դիրքը իր ոսոխ դրացիներուն միջև, իր փրկութիւնը իր բազուկէն սպասեց հիմա։ Այդ օրէն սկըսած յեղափոխական լուրջ գործունէութեան մը հիմնաքարերը դրուեցան։ Մակեդոնացի բնիկներ կազմեցին Բուլղար-Մակեդոնական Յեղափոխական Կոմիտէն, որ իրեն նպատակ դրաւ ներքին ուժ գոյացնել երկրին մէջ։ Իսկ Ա. Պոլսի նահանգին բնիկները, կամ ինչպէս բուլղարները կ'ըսեն, օդրինցիք, հիմնեցին Սթրանջա ընկերութիւնը, որ յատկապէս նուիրուած էր հարաւային Թրակիոյ՝ Օդրինի նահանգի անկախութիւնը ձեռք ձգելու։ Շոշոկանքը տեղի տուաւ վերջապէս լուրջ ու գաղտնի գործունէութեան. սնափառ վաճառականներու եւ փող փչող գրչակներու տեղն անցան գործի մարդիկ, որոնք վճռեցին իրենց խելքին ու խղճին անսալ, և ոչ թէ գործիք դառնալ Ֆէրդինանդի շահերուն։ Աղատագրելով քաղաքական շրջանակներու հովանաւորութենէն, առաջին անգամ ասոնք էին որ իրենց նշանաբանն ընտրեցին „Մակեդոնիան մակեդոնացիներուն"։

Արդարութիւնը կը պահանջէ խոստովանիլ, որ հակառակ դաւադրական գործունէութեան մէջ իրենց ունեցած անփորձութեան՝ քիչ ժամանակի մէջ յաջողեցան տեղական, ներքին ուժ կազմակերպել և լուրջ պատրաստութիւններ տեսնել ժողովուրդը զինելու։ Սթրանջան 97-ի ապրիլին Օդրինի կուսակալութեան մէջ ժողովրդային շարժում մը առաջ բերել փորձեց, բայց անյաջող։ Զինեալ խումբեր անցան արդարև սահմանը, տեղի ունեցան ընդհարումներ, բայց բոցը շուտ մարեցաւ. օդրինցին անպատրաստ էր տակաւին լուրջ աջակցութիւն մը ցոյց տալու արշաւողներուն։ Վերջիններս տեղատարափ անձրևներու հանդպելով լեռներու մէջ, ետ դարձան։ Այդ անյաջողութիւնը դաս մը եղաւ, և Սթրանջան անկէ ետք նոյն եռանդով, բայց աւելի շրջահայեաց շարունակեց վարել իր գործերը։

97 տարին Թերևս այդ պատրաստութիւնները կը-տակէր իր յաջորդին։ Բայց Ոգին նորէն խառնեց գործը. Թիւրքերը օրաւուր ծաւալող խմորումին հոտն առնելով, վճռական հարուածով մը վերջ տալ ուզեցին այդ խնդրին. իրենց պատմութեան „սարսափներու" գլխին կը պակսէր Մակեդոնիան։ Եւ ահա նոյեմբերին Իւակիւբի նահանգին մէջ մանրանկար սկզբնաւորութիւն մը եղաւ հայ կոտորածներուն։ Հարուածն անողորմ եղաւ մանաւանդ ուսուցիչներու և քահանաներու նկատմամբ։ Հազարաւոր գեղացիներ ահաբեկ՝ տուն-տեղ թողած Բուլղարիա փախան, խուճապի աղաղակ մը ծածկեց Բուլղարիան։ Ֆէրդինանդի հաշտութենէն ետք չէր սպասուր այդ արհաւիրքը. ցնցուեցան բուլղարները, սթափեցաւ վերջապէս նաև Մ. Գ. Կոմիտէն. նոր հասկցաւ որ ինքը պաշտօնական շրջանակներու ձեռքը խաղալիք եղած էր։ Զգաց իր սխալը, թօթուեց իր թմրութիւնը և պաշտօնապէս յայտարարեց թէ հաւատ չպիտի ընծայէ այլևս բուլղար և ռուս դիվանագէտներու խոստումներուն, այլ կռիւ պիտի մղէ Թիւրք բռնակալութեան դէմ ամէն տեսակ միջոցներով։

Չենք գիտեր թէ գործը մինչև որ աստիճան պիտի հասնի ձայնի խօսքին. բայց մեզ համար կարևոր կէտն է Մ. Գ. Կոմիտէի կրած բարեշրջումը։ Փորձը ցոյց տուաւ նախ որ „չէզոք", „պատկառելի", „հարուստ", „դիւանագէտ", „ազդեցիկ" պարոններու տեղը չէր հոդ, և անոնք քաշուեցան կամաց կամաց։ Եւ երկրորդ՝ թէ դիւանագիտութիւնը խորթ մայր մըն է, որուն ձեռքը սղմել պէտք է հացը ճանկելու համար։

Մխիթարական է հաստատել նաև մակեդոնական խնդրին նկատմամբ բուլղար հասարակութեան մէջ հետզհետէ տիրել սկսող անշահախնդիր վերաբերումը։ Վերջին ծայր շահեկան է այդ տեսակէտէն յունուարի սկիզբը Սոֆիա գումարուած միթինգի մը մէջ քննարկուած որոշումները, որոնք ամէնէն գործնական և ամէնէն արդար լուծումը կը բերեն խնդրին։ Ուրախութեամբ կը թարգմանենք հոս ատոնց էական մասը, որ կատա-

րելապէս կը համաձայնի հայկական խնդրի լուծման համար Դաշնակցութեան դրած հիմնական սկզբունքներուն։ Սոֆիայի քաղաքացիք „Կոչում կ'ընեն բալկանեան ազգերուն և բալկանեան թերակղզիին յառաջդիմական կուսակցութիւններուն, որ փոխադարձաբար համաձայնին մէկ պահանջի մը վրայ, այն է ինքնավարութեան ինչպէս Մակէդոնիոյ նաև Թիւրքիոյ միւս նահանգներուն համար, և ամէնքն ալ հրաժարին առաջիկային որ և է ոտնձգութիւն ունենալէ Մակէդոնիոյ վրայ։ Այդ ինքնավարութիւնը պիտի տարածուի Մակէդոնիոյ համար շրջաններու և գաւառներու վրայ, որոնք իրաւունք պիտի ունենան իրենց տեղական գործերուն համար ընտրել իրը պաշտօնական լեզու գաւառի մեծամասնութեան լեզուն, և երկրի ընդհանուր գործերուն համար քանի մը պաշտօնական լեզուներ — ինչպէս Զուիցերիոյ մէջ։ Ատով բոլոր ազգայնական խումբերը, որքան փոքր ալ ըլլան, հնար պիտի ունենան իրենց ազգայնութիւնը զարգացնելու։ Մակէդոնական խնդրին նկատմամբ այսօրինակ համաձայնութիւն մը վերջ պիտի դնէ բալկանեան երկիրներու ներքին կռիւներուն և անոնց համար պիտի ստեղծէ այն պայմանները, որոնք հարկաւոր են ընդհանուր ուժերով գործելու մէկ կողմէն Թիւրք կառավարութեան դէմ, և միւս կողմէն օտար դիւանագիտական ինտրիգներու, բան մը որ մեծապէս օգտակար պիտի ըլլայ իրենց և շահաւոր՝ եւրոպական խաղաղութեան համար"։

Իւսկիւբի սարսափները ոչ միայն դրդեցին մակէդոնացի և բուլղար յեղափոխականները կուռ շարքերու մէջ միացնելու իրենց ուժը, այլ և իրենց դիւանագիտական արձագանգն ալ ունեցան։ Իր ժողովրդին յարաճուն զայրոյթին դիմաց Ֆէրդինանդը խոհեմութիւն չհամարեց անտարբեր մնալ. իր ճարպիկ քաղաքականութիւնը փութաց օգտուիլ առիթէն։ Փետրուարի սկիզբը խիստ ծանուցագրով մը Բ. Դռնէն պահանջեց անաչառ քննութիւն կատարել Իւսկիւբի անցքերուն վրայ և յանցաւորները պատժել։ Մարդասպանը քիչ մը կմկմալէն ետք՝ հրամայեց քննիչ յանձնաժողով մը կազմել որ արտօնուեցաւ զանցառու և յանցապարտ քայմաքամները պաշտօնանկ ընել ու պատժել, անմեղները արձակել բանտէն։ Մինչև հոս օսմանեան կարգերու սովորական պատմութիւնն է. խնդիր է թէ Ֆէրդինանդը պիտի ուզէ՞ պնդել այդ խոստացած քննութեան ու պատիժներու իրականացմանը։ Դժուար։ Տարակոյս չկայ թէ իր բերնին ջուրերը կը վազեն Մակէդոնիոյ համար. բայց մէն մինակ իր ընելիք գործը չէ ատ. գահը կըրնայ վտանգել։ Իր տեղը տաքցնելու համար հոն, առայժմ կը բաւեն բուլղար նորանոր եպիսկոպոսական աթոռներու հաստատումը, որ իր խնամքի առարկան ըրած է շատոնց։ Պոլիս այցելած ատեն, իբր ձեռքպագի նուէր 5 բէրաթի խոստում առած էր Մարդասպանէն. 3-ը դժուարութեամբ ստացաւ դեռ նոր, կը մնայ 2-ին իրագործումն ստանալ և քանի մը հատին ալ... խոստումը։ Իր ծանուցագիրը Մարդասպանին ուղղուած բաց չէք մըն է. թող ստորագրէ, կը մոռցի Իւսկիւբը... ժամանակի մը համար։

Բայց Ֆէրդինանդներն ու Համիդները պատմութեան ընթացքը չեն կասեցներ։ Մակէդոնական խնդիրը երէկ աննշան, այսօր ահաւոր հարցականի մը պէս տնկուած է Մարդասպանին արիւնկալած աչքերուն առջև, աւելի սպառնալից քան Կրէտէի խնդիրը։

Իր լուծումը՝ ժամանակի՞ խնդիր է՞ալ. չմոռնանք սակայն, որ անակնկալն ալ իր բաժինն ունի...

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

—

Արեւելեան խնդիրը որ սուլթանի գանկին բոլորը կը տգար ու կը սլքլար, մէկէն Ծայրագոյն Արեւելք ցատկեց, եւ կարծեցաւ թէ արեւմտեան շունուկատու քաղաքականութիւնը, Դեղին ծովու մէջ արեւելեան մեծ թիֆոնը պիտի պայթեցնէր, թերեւս բոլոր Ասիոյ գլխուն. եւ սն ժամանակ կարելի պիտի ըլլար ըսել, լոյսին հետ՝ փրկութիւնն ալ արեւելքէն պիտի գար։

Ասիոյ երկու հակաձայրերը, Մեւնոյն գծին վրայ, փտած ժանտահար եղած են. մէկը առասպելական Զինաստանը, որ իր երախայական յաւակնութեանը մէջ, բրինձի հոտած արտերուն քով աֆիոնը կուրդկուրդ կը ծծէ. միւսը, դազիներու եւ հիւրիներու աշխարհը որ, մոլեռանդութեան ու ծուլութեան գզաթին վրայ ծալապատիկ մգլած ու ժանգոտած է։

Մոնդոլական Թիւրքիան ու մոնդոլական Զինաստանը, թեւթեւի, Ասիոյ ծուծը կը փտտեցնեն։ Միայն թէ երբ երկնային հպատակները, աֆիոնի քէյֆին մէջ Կոնֆուցիոսի մարդասէր բարոյականի առածներով կերեժկտան, խալիֆան ու իր խորոտ հաւատացեալները, իրենց կրօնական փրփրոտ ջղաձգումներուն մէջ, սուր ու հուր կը մնչեն։

Ցոյս կար թէ քաղաքակրթութիւնը, պիտի փեթռկէր ատ երկու մեռելաստանները, ուր՝ միլիոնաւոր էակներ, արեւելքի բարկ արեւին ներքեւ, օրարեւ չտեսած կը մնին։

Մենք տեսանք թէ տէրութիւնները, արեւելեան հարցին մէջ իրենց շահերու ու նպատակներու կուազանութեան պատճառով, ժխտական դեր մը կատարեցին։ Սուլթանը ֆէսը ծուռ դրաւ, ու իր ցեղային ու կրօնական բնազդի համապատասխան քաղաքականութիւն մը գործադրեց։

Նոյն ցուցամոլ անգործութեան ենթարկուած են Ծայրագոյն Արեւելքի մէջ ալ։ Հոն տէրութիւններու ցաւագար մարտանաւերը, Բէչիլիի ծոցին մէջ ապուշ-ապուշ իրարու կը նային ու երկնային կայսեր պատանքը կը հիներն ու կը ձեւեն։

Ծայրագոյն Արեւելքի հարցը հնամասական հարց մըն է. Մարմարայէն մինչեւ Դեղին ծով։ Նախշուն պատանքը պիտի երկարի խալիֆային փաթտոցէն մինչեւ Երկնային կայսրութեան ճենապակիէ սրունքները։

Բայց թէ ինչ պիտի ըլլայ հետեւանքը։ Միայն սա կարելի է ըսել թէ, տէրութեանց շահերու բուռն ընդհարումներու ատեն, հզօրագոյնի քաղաքականութիւնը մէջտեղ կելլէ. եւ այս ընդհանուր պճռկած, մթին նպատակներուն ու ձգտումներուն մէջ, որ իսկապէս խուլ ատելի կռիւ մըն է, զօրեղ սուր մը պէտք է արեւելեան հանգոյցը լուծելու համար։ Կերեւայ թէ նոր դարաշրջան մը բանալու համար մթնշաղ Ասիոյ վրայ պիտի կածկլտայ մինչեւ հիմա զսպած սպառազէն խաղաղութիւնը։ Բամիրի առիթին վրայ, ու Զինական ծովերուն մէջ, ամպրոպի մթաբքներ կան արդէն։

Երբ կողոպուտի, կամ դահիճի դերի վրայ է հարցը, Գերմանիա փէշերը սօթտած է. Վիլհէլմը՝ որ կը հետաքրքրի ամէն բանով, մանաւանդ արեւելքի շողերով ու ցոլերով, եւ որ առիթը չի փախցներ աշխարհի ոչ մէկ անկիւնը, նոյնիսկ ծովերուն տակ գերմանական հուշակը ու անը տարածել, եւ անոր հետ մէկտեղ Գերմանիոյ քաղաքական լուծերը, Զինաստանի մէջ քանի միսիոնարներու սպանումին վրայ, իր եղբայրը, քրուքներ թեւշալակ ըրած, ղրկեց որ երկաթէ աջուկով Զինաստանի կշտերը փորը լցնէ ու Գերման կայսեր աւետարանը բարոզէ անոնց։ Եւ հիմա, հակառակ մինչազգային իրաւունքի, Զինաստանի մեծկակ կտոր մը հողի վրայ թուխս նստած է։ Տէրութիւնները ինչպէս կերեւի առանձին գործունէութեան մէջ աւելի բախտաւոր են։

Երբ աչքի առջեւ բերենք Գերմանիոյ արեւելեան հարցին մէջ խաղցած շտես քաղաքական դերը, ու այդ ազգին խղճին մարմնացումը եղող Վիլհէլմը, անժուր գաղափար մը կունենանք Գերման մտքին ու անոր չեփուն քաղաքակրթութեանը վրայ։

Գերման կայսրը երկար լատեն Վլոսփորի մէջ Նիպէլունկի գանձերը արպտելէ ու հայոց արիւնին մէջ վհուկութիւններ ընելէ ետքը, Կոնֆուցիոսի գերեզմանին բոլորտիքը կը սլքտայ հիմա, Քրիստոսի շուքը ետեւէն ձգած։ Իրաւունք չունի՞ Զին մեծ փիլիսոփան, Մէնկիոս, որուն գերեզմանը զուցէ երկաթէ

թաթպաններով մարդիկ պղծեն օր մը, երբ կըսէր թէ „բրոնաւորները յեղուզակներ են:“

Հայեր ու միսիոնարներ կը մեռնին, աքօղը միշտ խաչակիր Կիյօմը կը վայելէ:

* * *

Պզտիկ խորհրդածութիւն մը. — Մեր մէջ կարգ մը մարդիկ կան որոնք միշտ շապիկ կը փոխեն -- օձի պէս -- եւ հաւատացած են ու կուզեն կուտեցնել հայ ժողովրդին թէ ազգին մէջ իրենց պէսը չիկայ, ու միշտ շեշմարտած, մտիկ կընեն թէ ո՞ր կողմէն հիացումի հովեր կը փչեն: Գրական Դաբիր մը շինած են իրենց համար, որուն ծպիտ էջերուն ետեւ կը կարծեն թէ անհպելի են, ու ազգին պատգամներ տալու ամբարհաւաճութիւնը ունին: Դեւերու այլակերպութեան օրէնքն ալ գիտեն. երբեմն թեւաւոր, երբեմն սգաւոր. քուրձ հագած ու գլուխին մոխիր ցանած, այնպէս մը պլլեալով որ դուրս հոտ չելլէ. փիլօնի տակ ալ կը ծւարին, մանաւանդ ճիւպպէի. իշարկին մեծ հայրենասէրի մը անունն ալ կունայ ամպհովանոյ զիրենք, հեղ մըն ալ կը նկատես որ ատ „Ալարայրի պլպուլները“ „մեծ քաղաքագէտի“ մը շքովը շքաւորեր են: Բաղեղի պէս ծողի մը կարօտ կզգան, ապա թէ ոչ հողին վրայ պիտի գալարուէին:

Ազգային պէտ հանճարներ են ատոնք -- գոնէ այնպէս կը կլլեցնեն մեր „պարզուկ“ ժողովրդին, -- որոնք իրենց ուղեղը ու սիրտը ճմռած են հայրենիքի ատրուշանին վրայ, ազգին այդ հին, անարծաթ ու քարոյականի տիպար յեղափոխականները: Եւ իրաւունք չունի՞ն մթէ, ազգին վերի արտի ծաղիկները, գրական մազաղաթներու կոթնած, ազգային անազնուութեան դէմ խշխշալու որ երեսդարձութիւն կընէ իր ամենէն անձնուրաց պահեստի մտքերուն որ այս պահուս ազգային կեանքի իտէալ գործիչները կը մարմնացնեն: Ու կը մրմռան մտքերնուն, „սին լոքոր“ ժողովուրդ, Թիէրի, իրենց մեծ վարպետին պէս:

Մարդ հաւկուր ըլլալու է, այդ գրական սպայակոյտին յաւակնութիւնը հըմբռնելու համար: Գրական ազնուապետութեան ասպետները որոնք իրենց հատկտիկ ծայնարկութիւններուն, պատգամի այլասերում մը տալ կը նկրտին, ապշած կը մնան թէ ինչու հայը իր տգիտութեանը մէջ չը խոնարհիր անսերմնածին հանճարներուն առջեւ, որոնք թերեւս հայկ դիւցազն ալ գրտեն, եւ կը թողուն որ շիջելափառ մնան իրենց աղբիւսին վրայ. կը կարծեն թէ ազգը փախնութիւն կընէ.

Եւ որովհետեւ կեանքի պայքարը կայ, պէտք է ամէն քար գլորցնել: Ատոր համար է որ, կրակէ շապիկ հագած, ֆաքիրի դէմքով ու ազգային հերոս նահատակի ու դիւանագէտի վայելչանով, դէս ու դէն կը ընթանան, աւետարանելով թէ Պոլսոյ երբեմնի ցոյցը „քաղաքական հեռատես հանճարի մը“, այսօր վայրայայած, գիշերաշէն հակումի արդիւնքն էր. եւ թէ իրենց գործերուն մէջ միշտ „Աստուծոյ մատը“ կայ. իսկոյն հառաչ մը ու խորունկ հեւք մը կը թռի այդ առաքելական անուշ բերաններէն: Անապական մարդիկ, „հոյակապ միութեան“ մը լուսաբներ, շիկափոկ պարանը ափերնին, կը քարոզեն նաեւ թէ իրենք յեղափոխական հակամարդկային գաղափարը մէկդի շպրտած, միայն ամբիծ ու կուսակրօն հայրենասէրներ են. որոնց վրայ մեղադրանքի ու դատապարտութեան ժիժքերը (parasit) չեն կարող ճարակ գտնել: Ատոնց համար անձնական նպատակը ամէն միջոց կարդարացնէ, որովհետեւ ազատամիտներ են: Եթէ հարկ է, Եգիպտոսի կոկորդիլոսներն ալ կը փոխարինեն, ու սրբազան գետերուն մէջ իրենց սիրտը կը ցայտեն, ... խաչի պէս: Վանական փսփսուկ մթնոլորտին մէջ ծլտորցած ու ֆշացած, երկնային քարոյականն աւելի լաւ կը ճանչնան քան երկրայինը: Եւ ատոր համար է երբ իրարու հանդիպին, Կիկերոնի քուրմերուն պէս անթառամ քմծիծաղ մը ունին աղկունքնուն վրայ:

Էնթրիկներու մէջ մեծցած, ու էնթրիկներով դմդոկած այդ գիտոսիկները որ նոր կեանքի շուշտակ ու աւսարդ դաւանանքին մէջ, իրենց հին օրորը կը ճգճգնեն, ու հին հաշիւնին կը քըքրեն, երբ բարկաճայթ դուրս կը սլանան իրենց վրաններէն, չեն զգար թէ Ցրովաղայի դիւցազնին պէս միակ խոցելի կէտ մը չունին:

Երբեմն Դամասկոսի ճամբուն վրայ ըլլալու պատրանքը կընծայեն այդ քաշքերը բայց միշտ ետոտիկ ու աշքերնին դէպի Պէյրութ լարած:

Եւ յաւէտ կը մնան „Անօթ անպակասութեան“:

* * *

Ան ու մահի աշխարհին մէջ, մեր պատրիարքը սուլթանին համար „հրաշափառ“ գոռալէ ու անոր արեւուն համար, մաղթանքներով ու աստուածաբանական խրթին թախանձներով, Ամբարչին քունը հատնում ընելէ բերանը մազ բսած, յանդգնեցաւ խնդրագիր մը ներկայացնել „յոտս հայրախնամ սուլթանին“, որուն մէջ. ազգին ճարահատ դրութիւնը նկարագրելով, հիւթը անցած դարմաններ ցոյց կուտայ: Ահա գլխաւոր կէտերը:

„Վնասուած հայերուն եւ մահաւանդ որբերուն համար ընդհանուր հանգանակութեան թոյլատրութիւն“:

„Դրամական տարեկան հատոյթ մը պատրիարքարանին“:

„Կեղեքող ոստիկանային դրութեան ջնջումը որ կը հալածէ հայերը եւ կը խափանէ անոնց գործունէութիւնը“:

„Զինուորական տուրքի գանձումը երկու տարի յետաձգել“:

„Պետական վարժարաններու մէջ, պետութեան ծախքով, հայ ուսանողներ ընդունիլ, ինչպէս կը լսայ յոյներուն, հրէաներուն եւ այլն“:

„Շնորհուած ընդհանուր ներման գործադրութիւնը. խղճի ազատութիւն, ու առեւանգուած եւ բռնի թրքացուցած աղջիկներուն եւ կիներուն քրիստոնէութեան վերադարձը“:

„Քարուքանդ եղած վանքերու, ժամերու ու դպրոցներու վերաշինութիւնը... եւ այլն“:

Ասոր կըսեն գայլի գլխին աւետարան կարդալ:

Ինչպէս որ տեսնենք պատրիարքին խնդիրքը պարզ իրաւաբանական եւ օրինական հարց մըն է. որուն դատաստանական լուծումը սա է. որովհետեւ օսմանեան կառավարական բոլոր մարմինը, եւ իսլամ խաժամուժը, երկնքի ու երկրի վկայութիւնով, հայերը սօթտեցին ու անոնց արիւնը խմեցին, կառավարական օրէնքով պէտք է տուժեն կամ պատժուին:

Յեղափոխութիւնը կը ծայնակցի պատրիարքին անմիջական արդար բողոքներուն, բայց ատիկա զրկուածներուն ու դժբախտներուն հալալ պահանջն է, եւ ոչ ազգին;

Սուլթանը, հէփշուով մը խոստացեր է, բամազանին խրգայի հէրիֆի ուխտագնացութենէն ետքը, գարապաշ պատրիարքին խնդիրքը կատարել:

Ուխտդ կատար ... մեծդ համդ. բայց յեղափոխութիւնը շատոնց իր քաղաքական դաւանանքին մէջ մոցուցած է, սա առածը „սուտ մեղային սուտ թողութիւն“:

Շատ բամազաններ պիտի անցնին դեռ, եւ խալիֆան Յոլտգի առիքներուն տակ առնետի պէս կծկտած իր մոզպետին քերնով միշտ սա աղիլեղի խօսքը պիտի ճգայ. „ըսէ հայոց պատրիարքին որ սուլթանը շատ բարիքներ պիտի ընէ իր սիրելի հայ ազգին...“

Եթէ սուլթանը վեհափառ ստախօսութիւնով էր „սիրելի հայ ազգը“ սփոփել ու յեղափոխութեան խշումներէն վրիպիլ կը ջանայ, կը սխալի:

Յեղափոխութիւնը միշտ հետ վրայ կը քալէ քնաւ ետ վրայ: Եւ թող զգուշանայ պիծակին բոյնը շատ մշտելէ:

Ո՞վ է մեղաւոր. եթէ թիւրք պետութիւնը չըմբռնէր սա պարզ ճշմարտութիւնը թէ,

Սրիւնով չաղացք չդառնար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նոր քամի է փչում, նոր յուսաբեր քամի անբախտ Կրէտէի համար... Արդե՞ք երկար պիտի շարունակի նակըտոյ գրական արդիւնք, կըսփոփէ՞ դժոխքի ու արհաւիրքների մէջ հեծեծող ժողովրդին...

Յունաց արքայորդու թեկնածութիւնը Ռուսիայի կողմից մի ախորժելի անակնկալ էր, որ ցնծագին ովսաննաների մէջ արձագանգ գտաւ կրէտացիների սրտում: „Զինովիէվը հրաման ստացաւ Պէտերբուրգից հաղորդել Սուլթանին, որ Նիկօլա ցարի անդրդուելի կամքն է Գէորգ իշխանին Կրէտէի կառավարիչ տեսնել“: Այս լեզուով էր խօսում հեռագիրը: Թւում է, թէ ռուսական քաղաքականութիւնը նոր շրջան է մտնում. թւում է, թէ Մուրավիովը այլևս չի ուզում համակերպել իր թէ Մուրավիովը այլևս չի ուզում համակերպել իր տխրահռչակ նախորդ Լոբանովին, և թէ Պոլսի նոր ռուսաց դեսպան Զինովիէվը այլևս չի հետևում Նէլիդովի փաղաքշական, աղէսային ընթացքին Արդիւլ Համիդի նկատմամբ: Այդ ենթադրութեան ուժ են տալիս ուրիշ պարագաներ ևս: Մի այլ հեռագիր քիչ առաջ ծանուցանում էր... „Զինովիէվը յայտնեց Դրան, որ քրդերի մշտական արշաւանքները դէպի ռուսական սահմանագլուխը իրենց աւերումներով ու կողոպուտ-

ներով հայաբնակ գիւղերում՝ ստեղծում է մի անտանելի վիճակ, և եթէ օսմանեան կառավարութիւնը կը յապաղի ամէնակարճ ժամանակամիջոցում անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել ամբողջ ռուս-տաճկական սահմանագլխի վրայ խաղաղութիւն հաստատելու — այդ դէպքում ռուս կառավարութիւնը հարկադրուած կը լինի ինքը միջամտել և քրդական վայրագութիւններին վերջ դնել»։ Երկու յիշուած հեռագրերն էլ լուրջ սպառնալիքի շեշտ են կրում. մենք ստիպուած ենք խոստովանել այդ, մանաւանդ որ Ռուսաստանը մինչև այսօր էլ չի հրաժարւում իր առաջարկից։

Ճիշդ է, այդ սպառնական թռիչքը մի վայրկեան յանկարծ կանգ առաւ և Ռուսաստանը իր պաշտօնական օրգանի բերանով յայտարարեց, որ նա իր խաղաղ յարաբերութիւնները սուլթանի հետ չի խզի Կրէտէի պատճառով։ Մի րօպէ կարծում էին, թէ ցարի կառավարութիւնը իր սպառնալիքը խսպառ յետ վերցնելու ճանապարհի վրայ է։ Բայց դա անկարելի է թւում. սուլթանը, իրաւ է, ընդդիմացաւ, սակայն անհնարին է, որ սոսկ նրա ճնշման տակ Ռուսիոյ կայսրը յետ վերցնէր իր խօսքը, որը, կարծես, ուլտիմատումի ձևով էր տրուած սուլթանին։ Ռուսաստանը չէր կարող այդքան թեթև սրտով նսեմացնել իր սեփական հեղինակութիւնը, ձգել իր մեծ համարումը սաւ ուղղափառ և բոլոր ուրիշ ժողովուրդների աչքում։

Արդիւլ Համիդի յանկարծակի շւարումը և նրա ուժգին դիմադրութիւնը հասկանալի են։ Նա պատճառ է բերում միւսիւլման աշխարհի ցասումն ու բողոքը հէլլէն իշխանի Կրէտէի կառավարիչ նշանակելու առթիւ. նա առարկում է, որ Գէորգ իշխանի հաստատիլը կը լինի միայն դիմակաւորուած միացում Կրէտէի և Յունաստանի։

Դիմադրում էր Գերմանիան. և այդպէս էլ սպասելի էր։ Զէ՞ որ Թիւրք-հէլլէնական ամբողջ ընդհարումի միջոցին Վիլհէլմ կայսրի „սրբազան“ սկզբունքն էր՝ երբեք թոյլ չտալ սուլթանի վրայ ճնշում գործ դնել, ընդհակառակը՝ թէ տալ նրան ընդդէմ եւրոպական պահանջների։ Սակայն և այնպէս վերջին հեռագրերը յամառութեամբ պնդում են, որ Գերմանիան ևս յարում է Ռուսիայի առաջարկութեան։ Աւել ևս, „Դէյլի Կրօնիկլի“ Վիէննայի թղթակիցը մի հեռագրով հաւաստում է, իբր թէ սուլթանը Վիլհէլմ կայսրի միջնորդութիւնն է աղերսել, իսկ Վիլհէլմը իպատասխան՝ առաջարկել է նրան Գէորգ իշխանի թեկնածութիւնը։ Պալատում — գրում է „Ֆրանկֆ. Յայթունգ“-ի Պոլսի թղթակիցը — սուլթանի բոլոր ազդեցիկ խորհրդատուները, որոնք յոյս էին դրել Գերմանիայի աջակցութեան վրայ, այսօր սկսում են համոզուել, որ, թէպէտ Վիլհէլմ || քարոզում էր երբեք ճնշում գործ չդնել սուլթանի վրայ, այնուամենայնիւ նա ոչ մի նիւթական զոհողութիւն չի անի յանուն իր այդ քարոզների։ Դիմադրում է Աւստրիան, և նա միակն է որ այդ դիրքում յամառում է մինչև այսօր։ Աւստրիան էլ առաջ է բերում բալկանեան պետութիւնների հաւասարակշռութեան յաւիտենական առարկութիւնը, հաւասարակշռութիւն, որ կարող է խախտուել Գէորգ իշխանին Կրէտէի կառավարիչ հաստատելով։

Իտալիան դեռ ևս ձեռնպահ է մնում։ Անգլիան և Ֆրանսան հէնց սկզբից հաճոյքով դիմաւորեցին Նիկոլա կայսրի առաջարկութիւնը։ Ռուսիայի ցանկութիւնը որոշւում է հետևեալ կէտերով. միակ անձը, որի թեկնածութեան նա (Ռուսաստանը) նախաձեռնող կարող է լինել, դա Գէորգ իշխանն է։ Բայց ցարը չի պնդում իր որոշման վրայ։ Ուրիշ պետութիւնները, նոյնպէս և Թիւրքիան, կարող են նոր թեկնածու առաջարկել, միայն թէ նա գոհացում տայ Կրէտացիների պահանջներին։ Ռուսաստանը չպիտի թոյլ տայ որ սուլթանը մի որ և է տաճկահպատակ անձի Կրէտէի նահանգապետ հաստատէ։ Ռուսաստանը իրեն պատասխանատու չի համարում այն բոլոր ցաւալի հետևանքների համար, որոնք առաջ կըգան Կրէտական հարցի անպատշաճ (Կրէտացիների համար) լուծումից։ Ռուսաստանը երբեք չի թոյլ տայ, որ Թիւրքիան իր զօրքերի թիւը աւելացնի Կրէտէում ևն. ևն։ Այս է Նիկոլա կայսրի ցանկութիւնը։ Պարզ է, որ այս բոլորը մի անակնկալ էր, որ բնականաբար սաստիկ յուզեց դիւանագիտական աշխարհը։ Ի՞նչ դրդումներով է արդեօք ղեկավարւում ցարի կառավարութիւնը, ի՞նչը թելադրեց նրան այդպէս յանկարծակի թշնամական դիրք բռնել իր մինչև օրս շոյած ու փայփայած սուլթանի դէմ։ Բայց պատճառների մէջ չմտնենք առ այժմ։ Մօտ ապագայում, անշուշտ, շատ բան կը պարզւի. թերևս, ո՛ գիտէ, արևելեան մռայլ, մթագնած հորիզոնը փոքր ինչ ժպտայ... Յուսանք... Այո՛, դարավերջիս դիւանագիտութիւնը մի բան է սովորեցրել կաշկանդուած և տանջուած ժողովուրդներին՝ համբերել ու յուսալ։ Յուսանք, որ Կրէտէի համար առաջարկուած թեկնածուների երկայն շարքը դեռ աւելի հեռուն չձգւի, յուսանք, որ Կրէտէի մարտիրոս ժողովուրդը դէթ այժմ շունչ քաշէ, որ այլևս նախկին մոլեգնութեամբ չշարունակուին կոտորածները ու արիւնհեղութիւնները քրիստոնեաների ու մահմէտականների միջև։

Սպասենք և յուսանք։

ՀԵՐՔՈՒՄ ՄԸ

Հ. Յ. Դաշնակցութեան Պարիզի Կոմիտէի փետրուար 20-ին հրատարակած շրջաբերականէն կ՝արտատպենք հետևեալ մասերը.

Հայրենակիցնե՛ր,

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բարիզի մասնաճիւղը.

1. Նկատելով որ ժամանակէ մը իվեր, Պիւլպիւլեան անուն մի անձ տեղւոյս գաղթականութեան մէջ լուր տարածած եւ կամ հայկատակ-պնակալէզ արբանեակներու միջոցաւ տարածել փորձած է, իբր թէ սուլթանի կողմէն մատնաւոր կերպով ղրկուած եւ պաշտօն յանձնուած ըլլալով բանակցութեան մտնել եւ համաձայնութիւն գոյացնել սուլթանի եւ յեղափոխականաց միջեւ, յաջողած է հաշտեցնել եւ ամէն բան վերջացնել։

2. Նկատելով որ քանիցս զանազան ընկերներու ներկայութեան, անամօթաբար ստելով, յականէ յանուանէ կըրկնած եւ յայտարարած է, թէ բանակցութեան մտած է նոյնպէս դաշնակցականաց հետ։

3. Նկատելով որ ի Բարիզ Դաշնակցութենէ զատ ուրէ ծանօթ մի հայ յեղափոխական կուսակցութիւն իպաշտօնէ ճանչցած ներկայացուցիչ, մասնաճիւղ կամ կիզրօն չունի.

Ներկայիս կուզայ հերքել այդ բոլոր ստայօղ ու անհիմն տարաձայնութիւնք եւ յայտարարել թէ Պիւլպիւլեանն անուն անձը ո՛չ մի յարաբերութիւն ունեցած է եւ ո՛չ իսկ բառ մը փոխանակած ո՛չ Դաշնակցութեան ներկայացուցչին, ո՛չ մասնաճիւղին եւ ո՛չ իսկ մասնաճիւղի ամէնապարզ մի անդամին հետ։ Նոյն իսկ ամէնալուրջ պատճառ ու ապացոյց ունինք ենթադրելու, թէ ոչ ալ մի այլ կուսակցութեան պատկանող բարեխիղճ մի յեղափոխականի հետ։

Իդէպ է կարծենք յաւելուլ թէ՝ Դաշնակցութիւնը ոչ միայն բանակցութեան մտած չէ այլ նոյն իսկ ամօթ կըզգայ մտնել փորձելու, Պիւլպիւլեանի կամ նման, ոչ մի հեղինակութիւն ունեցող ամէնաչնչին ճճիներու հետ...

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1898 յունուարի սկիզբը Զմիւռնիոյ մէջ բանի մը անյայտ ոճրագործներու զոհ դարձաւ տեղիս հարուստներէն Եսայի Եսայեանը։

Սպանիչները բաւական ատեն անյայտ մնացին։ Ատկէ օգտուելով կառավարութեան հաւատարիմ հայ շնիկները, իսկոյն քաղաքիս մէջ տարածեցին, որ Դաշնակցական Կոմիտէն է ըրեր այդ սպանութիւնը։

Նոյն ատեն Եգիպտոս եւ այլ տեղեր յեղափոխական դիմակ դրած արարածներ փութացին այդ սուտը շահագործել։

Բայց կառավարութիւնը կերպով մը զտաւ ոճրագործներուն հետքը։ Բռնուեցաւ յոյն մը Կիրիակօ անուամբ։ Հոս կառավարութեան լրտեսներն ու վարձկանները կարմրեցան իրենց հնարած զրպարտութեան համար եւ լուռ կեցան. իսկ հոն, Եգիպտոսի հերոսներն „աւելի թիւրք զտնուեցան, քան թիւրք ու հայ լրտեսները“։ Անոնք դեռ չեն լուր, դեռ կը շարունակեն զրպարտել մեզ։

Կոմիտէս պատիւ ունի պաշտօնապէս յայտնելու հայ հասարակութեան, որ ինքը երբեք մատ ունեցած չէ Ե. Եսայեանի սպանութեան գործին մէջ։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԶՄԻՒՌՆԻՈՅ ԿՕՄԻՏԷ

ԿՈՒԻ ԲԱՂԷՇԻ ՄՕՏ

Վերապահութեամբ կը հրատարակենք հետեւեալ լուրը, որ մասնաւոր անձ մը հաղորդած է մեզ Ռումանիայէն։

Կարճկան գաւառի ծանօթ հարստահարիչը քիւրդ ցեղապետ Մուսա բէյ, ֆէդայիներու վախէն, իր տունը Բաղէշ կը փոխադրէ դեկտ. սկզբին։ Քաղաքին Դաշնակցական Կոմիտէին ուղածն ալ ատ էր. աչքը վրան կը պահէ։ Վերջերս յանկարծ լուր կ'առնեն, թէ Մուսա բէյ 10 հոգով Կարճկան կ'երթայ։ Աղբիւրն իսկոյն 8 ընկերոջ հետ ետեւնուն կ'իյնայ և Պոռ գեղին լեռան ստորոտը ճամբանին կը կտրէ։ Տեղի ունեցած կռուին մէջ կըսպաննեն Մուսա բէյը և 8 քիւրդ. մերոնք դիտմամբ ողջ կը թողուն մէկը, որ երթայ կառավարութեան յայտնէ թէ ֆէդայիներն են սպանիչները և իզուր անմեղ մարդիկ չձերբակալուին։

ՆԻԻԹԱՏԻՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ստացած է.

1896-ի ուսանողական երեկոյթէ մը 334 ֆր. 10 ս., Ցունիսին՝ Բ.-ի ուսանողներէն 47 ֆր. 50 ս., Սուլինայէն՝ համազասպ 10 ֆր., Մ. Արղ. 20 ֆր., Ցիւրիխէն՝ Գ. Խորիկեան 5 ֆր., Լօնդոնէն՝ Պօղոսեան 3 ֆր. 10 ս., -- Հ. Զ. 1 ֆր.. Պ. քաղաքէն՝ Ա. Պ. 12 ֆր. 50 ս., Ռումանիոյ Գ. քաղաքէն՝ Մ. Լ. 60 ֆր., Քօլնարիէն՝ Անմնէր Խ. 12 շիլլին։ Բազէլէն Գ. Ի. 1ֆր. 80ս.

ՎՐԷԺ Կեդր. Կոմիտէն՝

1897 յուլիսին Գագիկի եւ Փիլիպի միջոցաւ „Թուրան“-ից 4120 ղուռն հետեւեալ ցանկով. „Աշրաֆ“-ի մնդուկից թէ կանխիկ եւ թէ պարտք վերցրած 1,507 ղր., „Ղոչիկ“-ների մնդուկից 200 ղր., Սովետից յանձնաժողովի ծախսած ժամացոյցից 500 ղր., „Գարուն“ խմբից 300 ղր., --„Աշրաֆ“ խմբի թիւ 224 հանգանակութեան թերթով Ցովակիմ Այվազեանից 300 ղր., Խաչակրից 100 ղր., Ռուստամ Ա. Մանուկեանից 100 ղր., Վարդ Մարդիկեան Սարգսեանից 50 ղր., Մուշեղ Մ. Տ. Դաւիթ 20 ղր., Փիլիպից 100 ղր.՝ Հասրաթեանից 43 ղր., Զըֆքը Թորոս 300 ղր., Վահան 200 ղր., Եանվար (ստորագրութիւնը պարզ չէ) 100 ղր., Ռաշիդ 50 ղր., Վահրիճ 200 ղր., Եանոս 50 ղր..

Ծնթ. -- Դրօշակի 1897 թիւ 13-ի մէջ Վրէժ Կեդր. Կոմիտէի ցուցակով „Թուրան“-ից ստացուած 7,000 ղուռնը փոխադրուած է Գագիկի եւ Փիլիպի միջոցաւ։

ԿԱԽԱՂԱՆԻ Կեդր. Կոմիտէն՝

Ջրվէժ 10 ֆրանք, Սաղայէլ 3 ֆր., Կախաղան խ. 24 դահեկան, Մօսին խ. 18 դհ., Լամբրօն 10 դհ., Եզէկիէլ 3 դահ.։ Զ.

ՏԱՊԱՐԻ Կեդր. Կոմիտէն՝

1897 նոյեմբեր ամսու մուտք։

Գեղջուկ շրջ. 20 դահեկան Ջրվէժ շրջ. 27 դհ., Սուլիշ շրջ. 55 դհ., Նորածին շրջ. 20 դհ., Կռուվ շրջ. 25 դհ., Շանթ շրջ. 20 դհ դհ., Ռշտունեաց շրջ. 20 դհ., Սլաք 5 դհ., Շինական 10 դհ., Հրահատ 188 դհ., Գիրուկ 94 հատ մարթինի փամփուշտ։

Դեկտեմբեր ամսու մուտք։ Վրէժ կոմիտէէն զանձուած (նոյ. ու դեկ. ամիսներու հաշիւ) 140 դահեկան։ -- Սուլիշ շրջ. 55 դհ., Ջրվէժ շրջ. 27 դհ., Գեղջուկ շրջ. 20 դհ., Արշակունի (նոյ. եւ դեկ.) 16 դհ.։, Սլաք 5 դհ.։

1897 հոկտեմբեր ամսու մէջ Կղզեակ քղ.-էն Ռումբ եւ Աշոտ 60 դահեկան։

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏԻ Կոմիտէն՝

Կարմիր քղ.-ի հանգանակութենէն. Հիւրասէր 25 ռուբլի, Խրատիվ 8 ռ., Հաց 30 ռ., Աւել 10 ռ., Պանդուխտ 3 ռ.։ Նոյն քաղաքէն Ջրաշէնի Անահիտ մասնաճիւղի միջոցաւ՝ Արշալոյս 1 ռ. 20 կոպէկ, Այտենկիւլ 1 ռ. 20 կ., Աղաւնի 1 ռ. 20 կ.։ -- Աւարայրէն՝ Ցովսէփ 10 ռ.։ -- Նուազեան խ. 10 ռ.։

Դաւիթ բէկ խ.-ի Սպարապետի միջոցաւ Սպարապետի Բեբրոնէ 1 ռուբլի, Նոյն տան Շողակաթ 1 ռ., Նունուշ տիկ. քաշ. 1 ռ., Փեփիկ. տիկ. Պապի. 50 կոպէկ, Ժամասէր Ղ. Բիծա 1. ռ. Օվ. Աբրահամ 1 ռ., Տիրացու Խաչօ 1 ռ. Մ. 50 կ., Դր. Անն 50 կ., Ս. անզաւակ 50 կ., Ալթունպաշ 50 կ., Դրիգոր Պետրոս 50 կ., Պ. Տիւրլուկ 50 կ., Լեւոն 30 կ., Վրացի 30 կ.։

ՈՍԿԵՀԱՆՔԻ Կոմիտէն՝

Քանդաս 20 օսմ. ոսկի, Շուշէճի 20 օսմ. ոսկի։ Որոտում խ. 20 դահեկան, Որսորդաց խ. 21 դհ., Ռուբինեան խ. 21 դհ., Արամայիս խ. 40 դհ., Ծիծեռնակ խ. 20 դհ.։

„Հուր-Երկաթ“ քղ.-ի Ռուբինեանց Ջերմեռանդ խմբէն՝ Ծերուկ, Ալիք, Շոգի, Առատ, Անվախ, Խոնարհ, Սրտոտ եւ Լապտեր 10-ական դհ.։ Արշալոյս 20 դհ.։ Համազումար 100 դհ.։

„Պղնձաքաղաք“-ի Մեղուեաց խմբէն՝ Ողորմած 46 դհ., Անկեղծ 35 դհ., Նրբամիտ 22 դհ., Զաւէն 16 ու կէս դհ., Երամդոտ 12 ու կէս դհ., Շոգի 11 ու կէս դհ., Մեքենայ 11 ու կէս դհ., Նարինջ 8 ու կէս դհ., Ցորեն 7 ու կէս դհ., Խոնարհ 3 ու կէս դհ., Դարի 3 ու կէս դհ.։ Համազումար 178 դհ.։

Ի. քաղաքի թիւ 6-էն 25 օսմ. ոսկի։

Ածխահանքէն՝ դեկտ. եւ յունուար ամիսներու վճարներ. Վրէժ եւ Նիզակ 40-ական դահեկան, Առիւծ 30 դհ., Մուշեղ եւ Ժիրայր 20-ական դհ., Հեզ 7 ու կէս դհ., Արթուն, Պարոյր, եւ Վարդ 10-ական դհ., Վահագն (նոյ. դեկտ. յուն.), Երկաթ 10 դհ., (յուն.)։ Համազումար 257 ու կէս դահեկան։

ԿԻՊՐՈՍԻ X. քղ.-ի Կոմիտէն՝

Ցունուարի ամսավճարներ՝ թիւ 1, 2, 3, 4 եւ Աւօ մէյմէկ շիլլին, Վարազ, Քէշնա, եւ Նետ կէս-կէս շիլլին։ Համազումար 6 ու կէս շիլլին։

ՄՕԼԷԿՈՒԼ Կոմիտէն՝

Հաւաքուած ամսավճար 98 մարկ։

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)